

3923

22

lv-76

23 SEP 2009

ԿՐՕՆԸ-ՊԱՏՄԱԿԱՆ-ՓԻԼՍՈՓԱՅԵԱՆ ԳՐԱԳԱՐԱՆ

Գրերի զիւտի 1500-ամեակի և տպագրութեան 400-ամեակի  
առթիւ.

Գ-ր. Գիլ. Մ. Խոստիկեան

№ 3

ԻՆՉ Է

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ

ԿԱՄ

ԻՍՐԱՅԷԼԻ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

**ՊԱՏՄՈՒԹԻՒՆ**

Թիֆլիզ

Տպարան «Կապրանճո»

1913

47.

ԿՐՕՆԱՊԱՏՄԱԿԱՆ-ՓԻԼԻՍՈՓԱՑԱԿԱՆ ԳՐԱԳԱՐԱՆ

Գրքերի զիւտի 1500-ամեակի և տպագրութեան 400-ամեակի  
անթիւ.

Դ-ր. փիլ. Մ. Խոստիկեան

№ 3

22  
Խ-76

Հարց եւ քննարկումներ

ԻՆՉ Է

=====

Պատկերացում

===== ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ

Թիֆլիզ

Տպարան «Հասկրանո».

1913

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Համայնքապետարանի կազմակերպչական կոմիտեի հրավեր

Ե Մ

Համայնքապետարանի կազմակերպչական կոմիտեի հրավեր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ



3786-55

### ԵՐԿՈՒ ԽՕՄԲ

Ի՞նչ է աստուածաշունչը.

Եթէ քրիստոնեային հարցնենք, նա կպատասխանի. Աստուածաշունչը սուրբ զիրք է. ճշմարիտ Աստուծու և կրօնի յայտնութեան միակ գրաւոր աղբիւրն է: Եթէ նոյն հարցը տանք գրականութեան պատմութեամբ հետաքրքրուող գիտնականին, նա կպատասխանի, որ Աստուածաշունչը ոչ միայն հրէական և քրիստոնէական կրօնի կանոնական աղբիւրն է, այլ նա միևնոյն ժամանակ մի թանգագին ժողովածու է մի հին ժողովրդի զանազան տեսակ գրական երկերի: Այսպիսի հայեացք ունենալով Աստուածաշնչի վրայ՝ նա կվերցնի և կուսումնասիրի այդ գիրքն այն գիտական մեթոտներով, որով նա ուսումնասիրում էր Վեդաները, Հոմերոսը, բարելական կամ յունական գրականութեան արդիւնքները:

Ներկայումս այսպիսի աշխատանքներ խիստ գիտական մեթոտներով Աստուածաշունչի վերաբերմամբ կատարուած են: Անշուշտ աւելորդ չի լինի ծանօթացնել հետաքրքրուող հայ ընթերցողին Ս. գրքի վրայ թափուած գիտական ուսումնասիրութիւնների եզրակացութիւնների հետ: Ահա այս է այս գրքոյկի նպատակը:

Աստուածաշունչ Ս. Գիրքը կազմուած է երկու մասից՝ Հին և Նոր կտակարաններից: Սկզբում մտադրութիւն կար այս երկու մասերի, այսինքն ամբողջ Աստուածաշունչի մասին եղած գիտական եզրակացութիւններն ամփոփել մի գրքոյկի մէջ. բայց մի քանի նկատառումներով ստիպուած եղանք բաւականանալ միայն Հին Կտակարանի պատմաճագողական վերլուծութեամբ, յետագային թողնելով «Աւետարանների», «Գործք առաքելոց»-ի և առաքելական թղթերի ուսումնասիրութեամբ զբաղուելը:

Այս գրքոյկի մէջ խօսք պիտի լինի ուրեմն միայն Հին Կտակարանի մասին, որը ըստինքեան Իսրայէլի գրական երկերի մի ժողովածու է ներկայանում: Գրական երկերի այս ժողովածուի ուսումնասիրութիւնը, ինչպիսին է այս գրքոյկը, աւելի յարմար կլինէր անուանել «Իսրայէլի գրականութեան պատմութիւն», բայց որովհետև Իսրայէլի գրականութեան այս հաւաքածուն աւելի Ս. գիրք կամ Աստուածաշունչ անունով է յայտնի, այդ պատճառով գրքոյկիս վերնագիրը դրինք «Ի՞նչ է Աստուածաշունչը»:

Բանիմաց ընթերցողի համար պարզ է, որ վտանգ չի կարող առաջ գալ այն բանից, եթէ գիտնականների եզրակացութիւններն Աստուածաշունչի այս կամ այն գրքի մասին՝ հակասեն եկեղեցական աւանդութեանը: Օրինակ՝ եթէ ապացուցուի, զիցուք, որ Ծննդոց գիրքը Մովսէսը չի գրել, դրանով Ծննդոց գրքի արժէքը չի կորչի, ինչպէս չի կորչի Խորենացու գրքի արժէքը, եթէ ապացուցուի, որ այդ գրքի հեղինակը Մովսէս Խորենացին չէ: Վերջապէս անհրաժեշտ է, որ ունէ երկ, մանաւանդ Աստուածաշունչի պէս տիեզերահոյակ

գիրքը, ամեն կողմից և տեսակէտից քննուի: Այդ առաջ կրերի հետաքրքրութիւն և որոնում մարդկանց մէջ: Հէնց այդ էլ է գնահատելին: Վնաս չունի, եթէ մարդ որոնումների ընթացքում մոլորուում է. ուղղամիտ մարդը մոլորուելիս էլ ուղիղ ճանապարհը միշտ կգտնի. եթէ չգտնի էլ՝ Աստուած կների նրա յանցանքը, որովհետև ճշմարիտ կրօնը գիտական որոնումներից երկիւղ չպիտի ունենայ, որովհետև մեռեալներն են միայն, որոնք չեն մոլորուում: Հարկ չկայ ասել, որ այս աշխատութեան ժամանակ՝ օգտուել ենք գերմանական գիտական գրականութիւնից:

1 Մարտ. 1913 թ. Տփլիսա.

Պր. Մ. Խասիկեան



ամբողջ ժողովուրդը: Անշուշտ ժողովրդական բանաստեղծութիւնը, ինչպէս ինքը բնութիւնը, այնպիսի հրապոյրներ ունի, որ յաճախ մեծ գեղարուեստագէտի լաւագոյն գործերից բարձր է գնահատուում: Սակայն այսպիսի գրականութիւն հասկանալու և գնահատելու համար՝ պէտք է ծանօթ լինել այդ գրականութիւնն ստեղծագործող ժողովրդի միջավայրին, պայմաններին, ազդեցութիւններին. այն ինչ Իսրայէլի նախնական պատմութիւնը բաւականաչափ պարզուած չէ: Բացի դրանից, ինչպէս գիտենք ամեն մի ժողովրդի բանաւոր գրականութիւնը անցնում է սերնդից սերունդ բերանացի աւանդութեամբ: Սովորաբար ժողովրդի մէջ նրանք, որոնք օժտուած են թարմ յիշողութեամբ և գեղեցիկ պատմելու ընդունակութեամբ, բանաւոր գրականութիւնը յետագայ սերունդներին աւանդելու գործը վերցնում են իրենց վրայ, և այդ բանը դարձնում են արհեստ, որով և իրենց հացն են վաստակում: Այս մարդկանց շնորհիւ ժողովրդական բանաւոր գրականութիւնը մնում է անկորուստ, այն, մինչև իսկ երբեմն ճոխանում է, մինչև որ մէկը յետագայում գրի է առնում: Որքան ուշ գրի առնուի, այնքան այդ գրականութեան կորսուելու կամ աղաւաղուելու վտանգը կմեծանայ: Արդ հարց է ծագում, թէ Իսրայէլի բանաւոր գրականութիւնը ամբողջովին թէ կիսատ գրի առնուեց և երկրորդ՝ երբ գրի առնուեց: Դժբախտաբար կարելի է ասել, որ Իսրայէլի բանաւոր գրականութեան այն մասը, որը կրօնի հետ ոչ մի առնչութիւն չունէր, անդառնալի կորստեան է մատնուած. կամ գրի չի առնուած և կամ գրի առնուելուց յետոյ էլ ոչնչացուած: Այսպիսի դէպքում Իսրայէլի գրականութեան պատ-

մութիւնը շատ կգժուարանայ այդ ժողովրդի գրականութեան տեսակներն ու աստիճանական զարգացումը նկարագրելիս: Երկրորդ գժուարութիւնն է որոշել՝ թէ Իսրայէլի բանաւոր գրականութիւնը երբ գրի առնուեց: Մինչև անգամ յայտնի չէ, թէ Իսրայէլի մէջ նշանագրերը երբ գտնուեցին և երբ գործադրութեան մէջ մտան: Դատելով այն բանից, որ երբայական գրերը մեծ նմանութիւն ունեն ասուր—բաբելոնական—փիւնիկական գրերի հետ, պէտք է ենթադրել, որ դրանք հին են: 1500 թուին Ք. ա. Քանանի և Փիւնիկէի իշխանները այս գրերով պաշտօնական յարաբերութեան մէջ էին Եգիպտոսի փարաւոն՝ Մերենպտախի հետ: Այս է ապացուցանում Թէլ-էլ-Ամարնայի բեւառգիր արձանների գիւտը: Այնպէս որ՝ թէպէտ հաստատ կարելի է ասել, որ Մովսիսի ժամանակ գրեր կային, բայց Իսրայէլացիք այդ գրերի հետ ծանօթանալ և դրանց գործածել կարող էին միայն Քանանում հաստատուելուց և քանանացիներից սովորելուց յետոյ:


Յամենայն դէպս Քրիստոսից 1000 տարի առաջ, աւելի ճիշտ Դաւթի թագաւորութեան ժամանակ՝ գիր և գրականութիւն գոյութիւն ունէր Իսրայէլում: Ուրեմն այս թուականներին կամ մի քիչ յետոյ գրի պիտի առնուէր Իսրայէլի անգիր բանահիւսութիւնը. բայց թվ է գրի առել, ինչպիսի հարազատութեամբ է գրի առնուել, անհ հարցեր, որոնց պատասխանը գժուար է տալ: Մի օւրիշ անյաղթելի գժուարութիւն է ներկայացնում այն հանգամանքը, որ ինչպէս բոլոր հնագոյն գրական արդիւնքների, նոյնպէս և Իսրայէլի գրական երկերի հեղինակները մեծ մասով անյայտ են, չեն յիշուած, իսկ յիշուած դէպքում՝ միշտ պիտի կասկածել ճշտութեան

մասին: որովհետև պէտք է ինկատի ունենալ, որ հնում գրական այլ սովորոյթ (էտիքէտ) էր իշխում: Մէկը՝ եթէ մի գիրք էր գրում, ոչ թէ ուզում էր, որ ինքն իբրև հեղինակ յայտնի լինի, այլ ուզում էր, որ իւր գիրքը շատ կարգացուի. այս նպատակով նա վերագրում էր այդ գործը իւր ժողովրդի մէջ հեղինակութիւն վայելող հին հերոսներին: Այս բանը ներկայումս կ'համարուի գրական խարդախութիւն, այն ինչ հնումը դա շատ ընդունուած ձև էր: Այս է պատճառը, որ Իսրայէլի մէջ շատ երկեր, որոնք շատ ուշ են առաջ եկել՝ վերագրուել են Մովսիսին: Այն ինչ Իսրայէլի գրականութեան պատմութեան համար շատ անհրաժեշտ է ամեն մի երկի հեղինակն ու ժամանակը որոշել, որպէս զի կարելի լինի բացատրել այդ գրականութեան զարգացման աստիճաններն ու միջավայրի պայմանները: Ոչ պակաս դժուարութիւն է ներկայացնում այն հանգամանքը, որ մինչև այժմ հերթադէտները չեն կարողանում ճշտութեամբ որոշել Իսրայէլի տաղաչափական կանոնները: Ինչպէս որ ներկայումս չենք կարողանում հայոց հին շարականների, Նարեկացու ողբերգութեան տաղաչափութիւնը լիովին ըմբռնել, այնպէս էլ անկարելի է երբայական գրականութեան շատ տաղաչափական կտորներ արձակից զանազանել: Միայն մանրազննին հետազոտութիւնը ցոյց է տուել, որ երբայական տաղաչափութիւնը հիմնուած էր ոչ թէ յանգերի թուի, այլ համաչափ շեշտաւորութեան վրայ: Այդպէս էր նաև ասուր-բարելական տաղաչափութիւնը: Տաղաչափութեան ճիշտ ըմբռնումը շատ կ'հեշտացնէր երբայական բանաստեղծութեան արու-

եան ու գեղեցկութիւնը, նրա աստիճանական զարգացումը հասկանալու:

Չնայած այսքան դժուարութիւններին՝ այնուամենայնիւ գիտնականները կարողանում են ներկայումս երբայական գրականութեան պատմութիւնը մասամբ նաև զարգացումը ընդհանուր, խոշոր գծերով մեղտալ, որն և կաշխատենք համառօտակի ներկայացնել հայ ընթերցողին. և որովհետև Հին կտակարանում ամփոփուած գրքերը կարելի է բաժանել չորս տեսակի, այդ պատճառով այս աշխատութիւնն էլ կ'բաժանենք չորս գլուխների՝

- Ա. Պատմական գրքեր.
- Բ. Մարգարէութիւն.
- Գ. Կրօնական բանաստեղծութիւն.
- Դ. Վարդապետական կամ զիդաքտիկական գրականութիւն:



**Ս. ԳԼՈՒԽ**  
**ՊԱՏՄԱԿԱՆ ԳՐԲԵՐ**  
**ՀԵԳՍՄՍՏԵԱՆ**

Իսրայէլի գրականութեան հաւաքածոյի՝ Ս. գրքի առաջին հինգ գրքերը կոչուում են Հնգամատեան: Ա. գրքում, Ծնունդք խորագրով՝ պատմուած է աշխարհիս և մարդու ստեղծագործութիւնը, մարդկութեան պատմութիւնը մինչև ջրհեղեղը և նրա հերոսները, յետ ջրհեղեղեան մարդկութեան սիրուելը Նոյի որդիներէց, Բաբելոնի աշտարակաշինութիւնը, Աբրահամի գաղթը դէպի Քանան և Աստծու հետ դաշինք կոելը, Իսահակի, Յակոբի պատմութիւնները և վերջինիս 70 հոգեով Եգիպտոս գնալը: Բ. գիրքը կոչուում է Ելք, ուր պատմած է Իսրայէլի նեղութիւնները Եգիպտոսում. Մովսէսի ծնունդը և Իսրայէլի փախուստը դէպի անապատը, Ահարոնի և Մովսիսի հրաշքները: Մինայի յայտնութիւնը և Տասնաբանեայ պատուիրանները: Ոսկեայ հորթը և Մովսիսի աստուածտեսութիւնը: Գ. գիրքը կոչուում է Ղևտական, ուր ամփոփուած են զոհի և ծիսապաշտութեան վերաբերեալ կանոններ: Դ. թուոց, ուր համարուած են Իսրայէլի կուռելու ընդունակ մարդիկ. յետոյ գալիս է ծիսապաշտական, կրօնաբարոյական կանոնների մի հաւաքածոյ: Ապա պատ-

մած է թէ Իսրայէլը հասնում է Յորդանանի արևելեան ափերը, լրտեսում է Քանանը, կռիւներ է մղում Եղոմի հետ: Մովսէսը տեսնում է Քանանը մի լեռան վերայից, իւր յաջորդ է ընտրում Յեսուէին: Ռուբէն, Գադ և Մանասէ ցեղերը ստանում են Յորդանանի արևելեան սահմանները. պատուէրներ են տրուում քանանացիներին բնաջինջանելու, երկիրը իրենց մէջ բաժանելու և Ղևտացիների քահանագործութեան մասին: Ե. գիրքն է Բ. օրինաց, որի բովանդակութիւնն է՝ Մովսիսի ճառը, Մովսիսի նոր օրէնսդրութիւնը, նորա օրհնանքն ու անէծքը և մահը:

Հրէական և քրիստոնէական աւանդութիւնն այս հինգ գիրքը մի գրական միութիւն է համարում և վերագրում է Մովսիսին, միայն այդ գրքի վերջին 8 տողը, ուր պատմուած է Մովսիսի մահը, վերագրում է Յեսուէին: Բայց պատմաբանասիրական քննութիւնը ցոյց է տալիս, որ այդ աւանդութիւնը հետևեալ հիմունքներով սխալ է: 1) Գրքի մէջ ոչ մի տեղ Մովսէսն իբրև հեղինակ չի ներկայացել, Մովսիսի մասին միշտ երրորդ դէմքով է խօսուում: 2) Մի քանի տեղ (ծնդ. ԺԲ. 14.), նկատողութիւն է արուած, որ այն ժամանակ իսրայէլացիք Յորդանանի միւս՝ արևելեան կողմն էին բնակուում, ուրեմն գրողը պէտք է արևմտեան կողմը բնակուած լինէր այն ինչ Մովսէսը երբէք այդ կողմերում չի եղել: 3) Մովսիսական օրէնքների վերլուծութիւնը ցոյց է տալիս, որ դրանք միայն Քանանում ծագած կարող են լինել:

Մրանցից զատ պէտք է նկատել, որ Հնգամատեանը մի գրական ամբողջութիւն չէ, ուրեմն մի հեղինակի գործ լինել չի կարող: Դրա ապացոյցն այն է, որ միև-

նոյն բանը մի քանի անգամ է պատմուած, երբեմն էլ զանազան պատմուածներ միմեանց հակասում են. ուրեմն այս երկի մէջ մի ամբողջական ծրագիր չկայ, որից կարելի է եղբակացնել, որ դա մի հաւաքածու է: Բազմաթիւ գիտնականներ\*) երկար տարիներ ռուսաց աստուածաբան հետեանքն այն է եղել, որ ներկայումս հնգամատեանը չորս անկախ աղբիւրներից է բաղկացած համարուում՝ չհաշուած ուրիշ մանր մունր խմբազբական փոփոխութիւններ: Առաջին աղբիւրն անուանուում է Եանվիստ, երկրորդը՝ Էլօհիստ, երրորդը՝ Բ. օրէնք, եւրոպական բառով Դոյսթօնմիում, չորրորդը՝ քահանայական օրէնագիրքը կամ եւրոպական բառով՝ Պրիստէքթօքէքս:

Առաջին աղբիւրը Եանվիստ է անուանուած, որովհետեւ այն կտորները Հնգամատեանի մէջ, որոնք այս աղբիւրից են առնուած՝ Աստուծոն յիշելիս Եանվէ անունն են տալիս, այնինչ երկրորդ աղբիւրը Աստուծոն Էլօհիմ է անուանում, զրա համար էլ Էլօհիստ է կոչուում: Եթէ Հնգամատեանից հանենք այն հատուածները,

\*) Բժիշկ Աստրուք 12 հին փաստաթղթերի հիւպօթէզն էր ընդունում. որպէս թէ Մովսէսը այդ 12 փաստաթղթերը 4 սիւնեակի է բաժանել և կազմել է ներկայ Հնգամատեանը: Մի ուրիշ գիտնական Vater կարծում էր, որ Հնգամատեան բաղկացած է բազմաթիւ հատուածներից: De Wette լրացման հիւպօթէզն էր մէջ բերում: Մի ուրիշը ընդունում էր, որ Հնգամատեանը կազմուած է 4 փաստաթղթերից 1) դաշինքի թուղթ, 2) Ծննդոց, 3) առաջին պատմողը, 4) երկրորդ պատմողը: Ներկայումս հեղինակաւոր է համարուում այս խնդիրների նկատմամբ Wellhausen:

բը, ուր Աստուած Եանվէ է անուանուած, և դասաւորենք, նոյնպէս դասաւորենք այն հատուածները, ուր Աստուած Էլօհիմ է անուանուած, կտեսնենք, որ մենք կունենանք երկու տարբեր աղբիւրներ, երկուսն էլ պատմական: Նրանք պատմում են աշխարհի ստեղծագործութեան, զբախտի, ջրհեղեղի, աշտարակաշինութեան մասին: Առաջ են բերում աւանդութիւններ զանազան հերոսների և նահապետների մասին: Այս աւանդութիւնները հին ծագում ունեն. հաւանօրէն նրբաւոր ժողովրդական անգիր հին զրոյցներ են եղել, որոնք զանազան ժամանակներում և տարբեր մարդկանց ձեռքով գրի են առնուել: Եանվիստական հատուածներն աւելի հին են թուում, բայց գրի են առնուել հաւանօրէն IX դարում՝ մօտ 850 թուին՝ Յուզայի թագաւորութեան մէջ: Թ. դարու գրի առնուած լինելու են թաղրութիւնը անում ենք՝ հիմնուած այն զիտողութեան վրայ, որ Եանվիստական հատուածների մէջ ակնարկներ կան այն մասին, որ քանանացիք պիտի են թարկուեն Իսրայէլին, ձուլուեն նրանց հետ և անհետանան, իսկ այդ եղաւ Դաւթի և Սողոմոնի թագաւորութիւնից յետոյ, ուրեմն մօտ Թ. դարում: Միւս կողմից մենք չենք կարող այս աղբիւրը 750-ից յետոյ ծագած համարել, որովհետեւ այդ թուերին Իսրայէլի մէջ առաջ եկան մարգարէներ, որոնք Աստուծո և կրօնի վեհութեան մասին ուրիշ ըմբռնում ունէին և հետեւաբար, եթէ Եանվիստը նրանց ժամանակ գրի առնէր, նա նրանցից կազուէր և չէր վերագրի Աստուծո այնպիսի յատկութիւններ, որոնք մարգարէների ժամանակի կրօնական գարգացած ըմբռնման և ճաշակի համար անընդունելի էին: Երկրորդ ենթադրութիւնը, որ Եան-

վիստական հատուածների պատմողն ու գրի առնողը Յուզայի երկրից պէտք է եղած լինի՝ հիմնում ենք այն փաստերի վրայ, որ տեսնում ենք, թէ Եանվիստան աշխատում է Յուզայում գտնուած սրբատեղիների յարգը հակառակ Իսրայէլի մէջ գտնուած սրբավայրերի աւելի բարձրացնել: Յովսէփի եղբայրներից նա Յուզային և ոչ Ռուբէնին առաւելութիւն է տալիս: Քերտոնը մեծ սրբավայր համարում. Յեսուէի մասին, որը Եփրեմի ցեղից էր, հաղիւ թէ յիշատակութիւն է անում: Եանվիստական աղբիւրը՝ Էլօհիստական աղբիւրի հետ համեմատած՝ աւելի հին պէտք է լինի, որովհետև նա միամիտ պատմող է և Աստծուն մարդակերպ է ներկայացնում, Որը ուտում, խմում, քայլում, խօսում է՝ ինչպէս մի մարդ: Նա ամեն ինչ շատ բնական պարզութեամբ է պատմում, առանց քաշուելու նոյնիսկ ամօթալի տեսարաններից: Այն ինչ Էլօհիստը այլևս Աստծուն իբրև մարդ չի նկարագրում: Աստուած՝ այս աղբիւրի համաձայն խօսում է մարդկանց հետ հրեշտակների բերանով և կամ երազներում է երևում: Եանվիստի հակառակ Էլօհիստի պատմողն ու գրի առնողը պէտք է հիւսիսային կամ Իսրայէլի թագաւորութիւնից եղած լինի: Յովսէփի ցեղը, որ հիւսիսում էր բնակում, նրա համար ամենասիրելինն է: Հիւսիսային թագաւորութեան սրբատեղիները՝ Բէթէլ, Սիւբեմ, Բերսաբէ նորա ամենասիրելի վայրերն են, որոնց հետ կապուած են հին հերոսների գործերը: Եթէ իրաւ է, որ նա հիւսիսային Իսրայէլից է, ապա ուրեմն իւր նիւթը գրի առած պիտի լինի ոչ ուշ քան 722 թիւը, երբ այդ թագաւորութիւնը կործանուեցաւ: Պէտք է նկատել, որ այս հատուածները շատ լաւատես են Իս-

րայէլի ապագայի վերաբերմամբ, ապա ուրեմն պէտք է գրուած լինի մի այնպիսի ժամանակ, երբ Իսրայէլը երջանիկ օրեր էր վայելում, իսկ այդպիսի ժամանակ էր Իսրայէլի համար Յերոբոամ Ա-ի թագաւորութիւնը՝ մօտ 750 թուականներին:

Քննելով այս հարցը թէ՛ արդեօք Եանվիստական և Էլօհիստական պատմական գործերը մի գրական միութիւն ներկայացնում են՝ թէ ոչ, գալիս ենք բացատրական եզրակացութեան, այսինքն, որ այդ գրուածներն էլ պարունակում են իրենց մէջ տարրեր և միեւն իսկ հակասական տարրեր. ինչ որ հնշտ է բացատրել, եթէ ի նկատի ունենանք, որ գրանք ոչ թէ անհատի գրական արտագրութիւն են, այլ միայն հաւաքածու են ժողովրդի մէջ առաջ ևկած աւանդութիւնների, որոնք շատ յաճախ կարող են միմեանցից խիստ կերպով տարբերուել: Մանրամասն քննութիւն ցոյց է տուել, որ այս երկու աղբիւրներն էլ ունեն իրենց ստորաբաժանումները, որոնք տարբեր ժամանակներում են ծագել:

Ս. Գրքի Հնգամատեան մասում Եանվիստ և Էլօհիստ պատմական աղբիւրներն առանձին չեն, այլ նորա ի մի են ձուլուած ոչ միայն միմեանց հետ, այլ նաև վերև յիշուած քահանայական օրէնսգրքի, երկրորդ օրէնք կոչուած աղբիւրների և ուրիշ մանր գրուածների հետ: Եանուիստի և Էլօհիստի միմեանց հետ ձուլուելը տեղի է ունեցել յառաջ քան վերջին աղբիւրների գոյութիւնը: Այն մարդը, որը վերցրել և այդ երկու աղբիւրները միացրել է՝ անուանում ենք Եանվիստ. բայց որովհետև այդ աղբիւրները միմեանցից շատ տեղ տարբերուում և միեւն իսկ տեղ տեղ էլ հակասում էին, այդ պատճառով Եանվիստը կամ խմբագրողը պէտք է աշխատէր այդ

3786-55



կտորները յարմարեցնել. իսկ այդ կարող էր անել կամ շատ հատուածներ կրճատելով կամ բոլորովին բաց թողնելով և կամ իւր կողմից նոր կտորներ աւելացնելով՝ այդ հակասական հատուածները պարզելու կամ մեկնելու համար: Այս աշխատանքը տեղի պիտի ունեցած լինի 650-ից ոչ յետոյ, որովհետև 650-ից յետոյ հանդէս է գալիս «Բ. օրէնք» աղբիւրը, որը ոչ մի աղբեցութիւն չի թողել այս ձուլման գործի վրայ: Ենթադրուում է, որ խմբագրողը կամ միացնողը մի հոգի չէ. այլ այդ բանի վրայ աշխատել է խմբագրողներին մի ամբողջ դպրոց:

Հնագոյն երկու աղբիւրներից հիմնովին տարբերուում է «Բ. օրէնք» կոչուած աղբիւրը, որը գլխաւորապէս Հնգամատեանի Բ. օրինաց գիրքն է կազմում: Այս աղբիւրը բովանդակում է Մովսէսի ճառերը և նրա զբաժ վկայութիւնները, օրէնքներն ու իրաւունքները, որ նա տուել է իսրայէլացիներին Յորդանան գետի միւս կողմում: Յատկապէս Բ. օր. ԺԲ—ԻԶ. գլուխները ամեն տեսակ օրէնքների մի չոր հաւաքածու են:

Այս աղբիւրի ծագման ժամանակի մասին մենք շատ որոշ տեղեկութիւն ունենք Դ. Թագաւորաց գրքի ԻԲ. 8—ԻԳ. 24 գլխում, ուր պատմուած է Յուդայի Ովսէ Թագաւորի կրօնական վերանորոգութեան մասին: 621 թուին քահանաները յայտնում են Թագաւորին, որ տաճարում գտնուած է մի հին Ուխտի գիրք, որը Մովսէսի զբաժ պիտի լինի: Թագաւորը հրամայում է ժողով գումարել և կարդալ այդ գիրքը, և երբ նոցանից հաւանութիւն է գտնում, այդ գրքի բովանդակութիւնը դարձնում է պետական իրաւունքի հիմք:

որի համաձայն նա կործանել է տալիս բոլոր միւս տաճարները, սեղանները, սրբավայրերը բացի Երուսաղէմին, ուր հրամայում է կենդրոնացնել ամենտեսակի պաշտամունք, և պատուիրում է ծիսապաշտութիւնը և օրէնքները կատարել այնպէս, ինչպէս այդ գրքումն է պատուիրուած: Բայց ի՞նչ եղաւ այս գիրքը. Ս. գրքի մէջ ոչ մի տեղ չի ասած, որ նա կցուեցաւ միւս երկու աղբիւրներին: Բայց մենք որոշ հիմքեր ունինք համոզուելու, որ այդ գիրքը Հնգամատեանի Բ. օրինացն է, որովհետև այն բարենորոգութիւնը, որը Ովսէն անում է Յուդայի Թագաւորութեան մէջ և որի մասին պատմուած է Դ. Թագաւորութեան գրքում, կէտ առ կէտ համաձայն է այն պահանջներին, որ անում է Բ. օրինաց գիրքը: Օրինակ՝ թէ այս Թագաւորի բարենորոգութիւնը և թէ Բ. օրէնքը պահանջում են, որ բարձունքերում գտնուած սրբավայրերը ոչ ընչսնան, որ պաշտամունքը միայն Երուսաղէմի տաճարում լինի և այլն: Պարզ է ուրեմն, որ այդ գտնուած գիրքը և Բ. օրէնքը նոյնն են: Քննելով Բ. օրինաց գրքի բովանդակութիւնը՝ տեսնում ենք, որ այդ գրքի մէջ զանազան ձեռքեր յետագայում դեր են խաղացել, որոնցից և յառաջ են եկել զանազան յաւելումներ մանաւանդ սկզբում և վերջում: Այնպէս որ սկզբնապէս բնագիրը եղել է Բ. օրինաց ԺԲ—ԻԶ գլուխները, իսկ Ա.—ԺԲ և ԻԶ—վերջին գլուխները այսինքն յառաջաբանը և վերջաբանը մեծ մասով յետագայ խմբագրողների գործ պիտի համարել:

Բայց ո՞վ է հեղինակն այս աղբիւրի, կամ ի՞նչպէս բացատրել այս երրորդ աղբիւրի ծագումը: Դա Մովսէսին վերագրելը մի թիւրիմացութիւն է: Զի կարելի հաւատալ, որ Մովսէսը 621 թուից մօտ 700 տա-

րի առաջ անապատում մի գիրք գրած լինի, այդ գիրքը բերած և պահուած լինի Երուսաղէմում և 700 տարի շարունակ մոռացութեան արուած լինի և յանկարծ 621 թուին մի քահանայ գտած և իբրև նորնութիւն յայտնած լինի ժողովրդին: Պէտք է ուշադրութիւն դարձնել այն հանգամանքի վրայ, որ նախ՝ այդ օրէնքները անապատում չէին կարող արուել և երկրորդ՝ որ Երուսաղէմն իւր տաճարով Իսրայէլի թագաւորութեան կործանումից յետոյ միայն այդպէս բացառիկ նշանակութիւն ստացաւ: Պէտք է համոզուել, որ այն հայեացքները, որոնք այս օրէնագրքում ամփոփուած են, մարգարէների գործունէութեան և պահանջի հետեանք են: Այս գիրքն արդիւնք է Երուսաղէմի մարգարէների և քահանաների վերանորոգչական կուսակցութեան գործունէութեան: Այնպէս որ՝ գալիս ենք այն եզրակացութեան, որ այս գիրքը Մովսէսը չէ գրել և շատ հին չէ, այլ 621 թուականից հազիւ մի քանի տարի առաջ գրի առնուած պիտի լինի: Այս գիրքը Մովսէսին է վերագրուել՝ նրան աւելի հեղինակութիւն տալու դիտաւորութեամբ: Այնուհետև այդ գիրքը պաշտօնապէս ընդունուեց, արտագրուելով՝ տարածուեց ժողովրդի մէջ և իւրաքանչիւր գրագէտ, ինչպէս հնում սովորութիւն էր, այդ արտագրուած թերթերի վրայ անում էր իւր նկատողութիւններն ու մեկնութիւնները, այնպէս որ յետագայում այս աղբիւրն էլ կցուեց արդէն ի մի ձուլուած Եւրոպայի և Հիւսիսային աղբիւրներին. այդ եղաւ ոչ թէ այն նախնական ձևով, այլ յետագայ նկատողութիւններով և մեկնութիւններով ձուլուած:

Համեմատելով այս աղբիւրը նախկինների հետ տեսնում ենք, որ սա մեծ աւրնչութիւն և կախում

ունի վերջիններից, որից անհրաժեշտօրէն հետևում է, որ Բ. օրէնքի հեղինակները միւս երկու աղբիւրների հետ ծանօթ էին, այնինչ չորրորդ աղբիւրին ծանօթ չեն: Մրանից պարզ է, որ չորրորդ աղբիւրը 621-ից յետոյ ծագած պիտի լինի:

Միանգամ որ Բ. օրէնքը, կանոնական օրէնագիրք նկատուեց և համարուեց Մովսէսից գրուած, հասկանալի էր, որ պիտի աշխատէին միացնել Եւրոպայի և Հիւսիսային պատմական գրքերին: Այս բանն էլ արաւ մի երկրորդ խմբագրող: Այդ գործ գլուխ բերելու համար նա շատ բան պիտի հարթեր և յարմարեցնէր և մի քանի փոփոխութիւններ էլ մտցնէր նախկին աղբիւրների մէջ:

Վերջին աղբիւրը պէտք է համարել Քահանայական օրէնագիրքը, որի կենդրոնական մասը Ղևտականն է կազմում: Սկզբում կարծուում էր, որ գոնէ այս գիրքը պէտք է Մովսիսից ծագած համարել, բայց աւելի խոր դիտողութիւնը ուրիշ եզրակացութեան բերեց: Այս աղբիւրի ծրագիրն ու բնաւորութիւնը պարզ է. նա ուղղում է Իսրայէլի ժողովրդի սրբազան պատմութիւնն անել: Մանրամասն կերպով աշխատում է մեզ ծանօթացնել նախնական սուրբ ժամանակների սրբազան կրօնական հաստատութիւնների հետ: Շաբաթը, կերակրի պատուէրները, թլպատութիւնը, Չատիկը, սրբավայրը, քահանաներ, զոհեր, ղևտացիներ և նրանց ծառայութիւնը, կղերականների հասոյթը, անարոնեան տոնի քահանայապետութեան իրաւունքը, անախիւրներ, որոնցով սա հետաքրքրուում է: Հարց է թէ Թրք կարող էին այս խնդիրները հետաքրքրութեան առարկայ դառնալ. դրա պատասխանը կ'լինի անուշտ՝ Բաբելոնի

գերութեան ժամանակ կամ այդ ժամանակից յետոյ: 444 թուին՝ կարող ենք հաստատօրէն ասել, որ քահանայական օրէնքը գոյութիւն ունէր: Այն ժամանակը՝ երբ Կիւրոսը իսրայէլացիներին ազատեց գերութիւնից, Պաղեստին վերադարձաւ եղբայրս դպիրը աստուածային օրէնքը ձեռքին՝ 458-ին: Այդ գրքովնա ուզում էր Երուսաղէմի հրէաներին քննել և այդ գրքի պատուէրների համաձայն Երուսաղէմի համայնքների նիստուկացը և յարաբերութիւնները կանոնաւորել: Եղբայրս՝ Երուսաղէմի Նէեմի անունով տեղապահին իւր կողմը ձգելով, 444-ին մի մեծ ժողով է գումարել տալիս և այսպէս կոչուած Մովսիսի օրէնսգիրքը կարդում է ժողովի առաջ: Բոլորը զարմանում և զարհուրում են, որ այդ օրէնքները չեն պահել. ժողովի հեղինակաւոր ձեռներն ստորագրելով՝ ընդունում են այդ գիրքը: Մենք կարող ենք համոզուել, որ այս գիրքը Ղևտականն էր և որ դա 444 թուերից ոչ շատ առաջ գրուած է հղել: Բ. օրէնքի հետ համեմատած՝ քահանայական օրէնսգիրքը յետոյ գրուած պիտի լինի, որովհետև առաջին աղբիւրի պահանջներն արդէն լռելեայն կատարուած են ենթադրուում: Քահանայական օրէնսգիրքը ժամապաշտութեան, ծիսակատարութեան և քահանաների վրայ աւելի ուշադրութիւն է դարձնում, ինչ որ պէտք է մի տեսակ զարգացում նկատել: Եթէ մենք մտնենք Իսրայէլի գրութեան մէջ Բաբելոնում, այն ժամանակ մենք կ'հասկանանք այս օրէնսգրքի պահանջների միտքն ու հոգին: Հրէաները գերի տարուելով Բաբելոն՝ ցրուեցին հեթանոսների մէջ և նրանց հետ շփուելով՝ ենթարկուած էին իբրև ազգ կորստեան վտանգի. իսկ այդ բանի առաջն առնելու համար հասկանալի է, որ յատկա-

պէս քահանաներն աշխատէին Իսրայէլի և հեթանոսների տարբերիչ յատկութիւնների վրայ շեշտել: Ամեն մի հաւատարիմ հրէայ պէտք է շաբաթը սուրբ պահի, պէտք է թլպատութեան ծէսը կատարի, պէտք է սինագոգներում հաւաքուի, ենթարկուի քահանաների և ղեկացիների հեղինակութեանը, ապա թէ ոչ ուրիշ կերպ խնչպէս պէտք է իմացուի, որ նա հրէայ է: Ահա այս պահանջներն է անում այս աղբիւրը, և նորա ծագումն այս պատմական տուեալներում շատ հասկանալի է: Վերջապէս այն հանգամանքը, որ գերութեան մէջ գործող Եղեկիէլ մարգարէն էլ շատ բանով սբա հետ համաձայն է, ցոյց է տալիս, որ այս գիրքը արտօրական հրէաների գրական արդիւնքն է: Բացի դրանից մանրագնսին հետախուզութիւնը ցոյց տուեց, որ այս աղբիւրն է եղել, որ ամբողջ Իսրայէլի պատմութեան մէջ՝ սկսած աշխարհի ստեղծագործութիւնից մինչև իւր ժամանակը՝ մի ժամանակագրութիւն է մտցրել, որը շատ նման է բաբելոնական ժամանակագրութեանը, որի հետ կարող էր միայն Բաբելոնում ապրող հրէան այդքան մանրամասն ծանօթ լինել: Այնպէս որ մեզ մնում է համոզուել, որ Ղևտականը 570—458 թուականներին պէտք է որ գրուած լինի: Ղևտականն էլ բաժանուում է հին և նոր մասերի, բայց այդ մանրամասնութիւնների մէջ մտնելու կարիք չկայ, միայն կարելի է ենթադրել, որ դարձեալ, ոչ թէ մի մարդ է գրի առել այս գործը, այլ դրա վրայ աշխատել է Բաբելոնում բնակուող մի ամբողջ քահանայական դպրոց: Այս օրէնսգրքի առաջ գալը ապացոյց է, որ Իսրայէլը իւր կրօնական հայեացքներով ոչ միայն չի յառաջադիմել, այդ ընդհակառակն՝ յետադիմել է այդ դարում: Մարգարէների

պահանջած կրօնի բարձր հոգևոր ըմբռնման հետքն անգամ չկայ: Կրօնն այստեղ դարձել է ձևականութիւն և արարողութիւն:

Հարց է առաջ դալիս դարձեալ, երբ է այս ազբիւրը միացել միւսների հետ: Պէտք է ընդունել, որ 444 թուին Քահանայական օրէնսգրքի կանոնական դառնալուց յետոյ, կարիք առաջ կ'դար այդ գիրքն էլ միացնել միւսներին. և ահա դուրս եկաւ մի երբորդ խմբագրող, որը նախկին աղբիւրները վերամշակեց և այս աղբիւրի հետ ձուլեց\*):

Այսպիսով ստացուեց ներկայ Հնգամատեանը, որի խմբագրութեան վրայ շատ պէտք է աշխատած լինի վերջին խմբագրողը, որը կատարել է իւր գործը 444—400 թուերին: Դարձեալ պէտք է մտածել, որ այդ ամբողջ խմբագրութիւնը մի մարդու գործ չէ, այլ երուսողէմում բնակուող քահանայական մի դպրոց պէտք է աշխատած լինի այդ բանի վրայ: Դեռ մինչև III դարի կէսերը նոր սրբագրութիւններ, յաւելումներ և յապաւումներ եղել են Հնգամատեանում, բայց համեմատաբար քիչ չափով, որովհետև հրէական միտքը սկսեց այդ դարերում քարանայ:

Այսպէս ուրեմն Հնգամատեանը ոչ թէ մի մարդու, այլ մի ամբողջ ժողովրդի, բազմաթիւ ժողովողների՝ խմբագրողների, հեղինակների գործ է եւ ոչ մի կամ մի բանի տարիներում գրուած, այլ այդ գրքի վրայ

\*) Ծանօթ. — Բ. Օրէնք և Քահանայական օրէնսգիրք կոչուած աղբիւրների մասին տես Դր. Մ. Յոստիկեանի «Սրբազան պատմութիւն Իսրայէլի» գրքի 106 և 157 էջերում աւելի մանրամասն:

աշխատել է սի ամբողջ ժողովուրդ (850—400) 4 եւ կէս դար շարունակ:

Հետաքրքիր է իմանալ, թէ այս գրական մեծ ժողովածուի մէջ ի՞նչն է զուտ ազգային իսրայէլական և ի՞նչը օտար ազդեցութեան արդիւնք:

Այս խնդրում ամենից առաջ աչքի են ընկնում այն չնաշխարհիկ աւանդութիւնները, որոնք ամփոփուած են Ծննդոց Ա.—ԺԱ գլ. և որոնք վերաբերում են տիեզերքի ստեղծագործութեան, դրախտի պատմուածքներին, հրեշտակների ամուսնութեան, ջրհեղեղին և Բաբելոնի աշտարակաշինութեանը: Այս պատմութիւնները պէտք է ծագած լինեն նախապատմական ժամանակներին: Պատմական ժողովուրդներն այդպիսի էպոսներ չեն ստեղծագործում, որովհետև ժամանակի ընթացքում՝ ժողովուրդների կրօնական հայեացքը զարգանում է: Վերոյիշեալ պատմութիւնների նախնական ձևը մենք գտնում ենք բաբելոնական միւթօլօգիայի մէջ, որից և հետևում է, որ իսրայէլացիք Բաբելացիներից շատ բանում ազդուել են: 300 թ. Ք. առաջ Բերոսոս պատմիչը և վերջին տարիներում Նինուէի պեղումներից գտնուած Ասուրբանիբալի (668—636) մատենագրանից հանուած մի արձանագրութիւն լոյս են սփռում այս պատմութիւնների վրայ: Բաբելացիքն էլ ամեն բանի սկիզբը նախաջուրն են համարել, որին Թիհամատ անունն էին տալիս, սա ապստամբում է աստուածների դէմ. աստուածներից միայն Մարդուկը համաձայնում է նրա դէմ դուրս գալ նախապէս խօսք առնելով աստուածներից, որ տիեզերքի իշխանութիւնն այնուհետև իրեն պիտի պատկանի. և Մարդուկը յաղթելով երկու կէս է անում Թիհամատին. մի կիսից

երկիրնքը, իսկ միւս կիսից երկիրն է ստեղծում: Սյունահե-  
տե նա ստեղծում է բոյսերը, կենդանիները, արեւը և  
լուսինը և այլն, ի վերջոյ նա կարում է աստուածնե-  
րից մէկի գլուխը և նրա արիւնից շաղախ շինելով՝  
մարդ է ստեղծում: Բաբելական առասպելի մէջ առա-  
ջին մարդու անունը Ադաման է. նա եփրատի և Տիգ-  
րիսի ափերի մօտ մի հրաշագեղ վայրում էր ապրում:  
Մի յանցանքի ժամանակ էա աստուածն իմանալով, որ  
Անու աստուածը Ադամանին պատասխանատուու-  
թեան պիտի կանչի, խորհուրդ է տալիս նրան՝ չուտել  
Անուի առաջարկած կերակուրից և չիմել նրա ջրից:  
Յիրաւի, Անուն Ադամանին կանչում է իւր մօտ և  
կենաց կերակուր և կենաց ջուր է առաջարկում նրան:  
Ադաման էայից վատ խրատուած լինելով՝ չի ընդու-  
նում, որով և նա յաւիտենական կեանքից զրկուում է:  
Գտնուած է մի հին բաբելական նկար, ուր մի մարդ  
ու մի կին կանգնած են մի պտղաւէտ ծառի տակ և  
օձն էլ նրանց կողքին: Բաբելական առասպելի մէջն էլ  
նախաջրհեղեղեան նահապետների կամ թագաւորների  
թիւը տաւն է. նրանք բոլորն էլ երկար են ապրել,  
նրանց անուններն էլ մեծ մասամբ համապատասխան  
են Հնգամատեանում յիշուած նահապետների անուններին:  
Հնգամատեանի ջրհեղեղի առասպելը աւելի մեծ առնչ-  
ութիւն ունի բաբելոնականի հետ, որը մեզ ծանօթ  
է նոյն Բերոսոսից և Ասուրբանիքալի մատենադարանի  
արձանագրութիւնից: Սրանց համաձայն աստուածները  
և յատկապէս Բէլը որոշում են պատժել մարդկանց  
ջրհեղեղով, բայց զրանցից մին՝ էան յայտնում է  
աստուածների գաղտնիք Ուտնապիշտիմին և պատուի-  
րում է նրան՝ մի նաւ շինել և իւր ընտանիքով ստա-

ցուածքով ներս մտնել. նա նաւը շինում է և ձեփում  
կարով: Ջրհեղեղ է լինում, 6 օր շարունակում: Նաւը  
կանգնում է ջրերի երեսին. 7-րդ օրը հանգստութիւն  
է տիրում: Նաւը հանգչում է մի սարի վրայ և մնում 6  
օր, իսկ 7-րդ օրը Ուտնապիշտիմին արձակում է նախ մի  
աղաւնի, յետոյ մի ծիծեռնակ և ասլա վերջը մի ագ-  
ուաւ, որը չի վերադառնում, որից Ուտնապիշտիմին իմա-  
նում է, թէ ջրերն իջել են. նա դուրս է գալիս իւր նաւից,  
աստուածներին զոհ է մատուցանում, որի հօտից զու-  
արձանում են նրանք: Դրանցից Բէլը օրհնում է նրան:  
Նոյնպէս Ս. գրքի Բաբելոնի աշտարակաշինութեան  
պատմութիւնը, որը մենք թէև Բաբելոնի արձանագրու-  
թիւններում չենք գտել, ինքնին ցոյց է տալիս, որ  
Խորայէլին էլ ծանօթ էր, որ Բաբելոնը ամենահին քա-  
ղաքակիրթ երկիրն է եղել, որ այդ ժողովուրդը հնագոյն  
քաղաքակրթուած ժողովուրդն է եղել, և այդ պատճա-  
ռով խորայէլացիք իրենց պատիւ են համարել, որ ի-  
րենց նախահայրը՝ Աբրահամը բաբելոնական ծագումն  
ունի և այդ կողմերից է եկել: Անտես անելով ուրիշ  
բազմաթիւ առասպելական գծեր, որոնք Բաբելոնում և  
Խորայէլի մէջ ընդհանուր են, յիշենք միայն, որ նոյն-  
իսկ Մովսիսի մանկութեան աւանդութիւնը նոյնպէս Բա-  
բելոնական է: Բաբելոնը հին թագաւորներից Սարկոնը  
կամ Սարուքինը պատմում է, որ իւր հայրն ու մայրը  
հասարակ մահկանացուներ չեն եղել, նրան ծնել է  
մի աստուածուհի, որը դրել է մանկան մի զամբիւղի  
մէջ, իսկ զամբիւղը գցել է եփրատ գետը: Հովիւները  
գտել են այդ զամբիւղը և աստուածներն օգնել են,  
որ նա Բաբելոնի ամենագօր թագաւորը դառնայ: Բայց  
ոչ միայն Խորայէլի ամբողջ տիեզերածնութիւնն է օ-

տար, եկամուտ, այլ և Իսրայէլի ամենահին կուլտուրայի շատ գծեր, որոնք իրենց արտայայտութիւնն են գտել Հնգամատեանում, մատնանշում են բարելոնական ծագումը: Օրինակի համար վերցնենք Համուրաբի օրէնագիրքը և համեմատենք այն Հնգամատեանի աստուածպաշտական, իրաւական նորմերի հետ, կ'գտնենք մեծ նմանութիւն և նոյնիսկ աւելին: Բարելակաւ այդ նորմերն աւելի զարգացած ձևով են հանդէս գալիս: Ի հարկէ Իսրայէլն այս բոլորը ոչ անմիջական կերպով փոխ է առել բարելացիւններից, որ զբանք մեծ մասամբ քանանացիների միջնորդութեամբ հաղորդուեցան Իսրայէլացիներին, որոնք գտնուելով Բարելոնի և Եգիպտոսի վաճառականական պողոտայի վրայ, վաղ ժամանակից ենթարկուեցան նրանց կուլտուրային:

Այսպէս ուրեմն անվիճելի է, որ Իսրայէլացիները կեանքի և վրականութեան մէջ բազմաթիւ օտար տարրեր կան, բայց միւս կողմից նոյնպէս անվիճելի է, որ Իսրայէլն ունի բնորոշ ինքնորոյնութիւն. այդ մենք կարող ենք նկատել, երբ որ դիտում ենք, թէ նա ինչպէս օտար նիւթը հէնց Հնգամատեանում իւր ազգային հոգեբանութեան համաձայն մշակել է: Իսրայէլի բնորոշ յատկութիւնները, որոնք արտացոլում են նորա գրականութեան մէջ, հետեւեալներն են: Ամենից առաջ նրա զօրեղ ենթակայականութիւնը և այրող կրքոտութիւնը պէտք է շեշտել: Իսրայէլացին երբէք ընդունակ չէ իրեն հետաքրքրող իրերի վրայ նայել օրեքտիւ կերպով. նրա թշնամին ամբողջ մարդկութեան, այժ, նոյնիսկ Աստծու թշնամին է: Հերոսները չափազանց իդեալականացած, թշնամիները ժահհոտ չարազործներ են մտածուած: Զօրեղ և բանաստեղծական է նրա արտայայտու-

թեան ձևը: Նրա Աստուածը երևում է բնութեան հիասքանչ տեսարաններում: Դրա փոխարէն՝ Իսրայէլի տրամաբանական մտածողութիւնը շատ թոյլ է: Նրանք փիլիսոփայական ամբողջական մտածողութեան անընդունակ են թուում. բայց մեծ է նրա բանաստեղծական տաղանդը, եթէ նա ոգևորութեամբ մի փոքր շրջանակի մէջ մի վեհ պատկեր է ուզում տալ: Բաւական է միայն համեմատել Բարելոնի և Իսրայէլի ջրհեղեղի պատմութիւնները, տեանելու համար, որ Իսրայէլը բարձր, կրօնական բանաստեղծական ըմբռնում և մաքուր արտայայտութեան եղանակ ունի տիեզերքի ծագումը բացատրելու: Հնգամատեանի պատմուածքները մի մի հրաշալիք են. նորա հանդէս են բերում մի հոյակապ միացում ծննդական բարձր մտքի, կրօնական անհուն և գեղեցիկ երևակայութեան և մանկական անմեղ հաւատի. այդ պատճառով նրանք գործել և գործում են մեծագոյն ազդեցութիւն բոլոր դարերի քաղաքակիրթ ժողովրդների վրայ:

Յետուի գիրքը. — Հնգամատեանի հետ համեմատած Ա. գրքի մնացած պատմական գրքերն աւելի պակաս արժէք ունին: Վերոյիշեալ հինգ գրքերին անմիջապէս հետևում է Յեսուայ գիրքը, որի բովանդակութիւնը կազմում է Իսրայէլացիների մուտքը Քանան և այդ երկրի բաժանումը ցեղերի մէջ: Դրա համաձայն այս գիրքը բաժանուում է երկու մասի. Ա.—ԺԲ գլ. Քանանի գրաւումը, ԺԳ.—ԻԵ. ցեղերի տեղաւորումը: Իւր բովանդակութեամբ և աղբիւրների նոյնութեամբ այս գիրքը սերտ կապուած է Հնգամատեանի հետ, դրա համար սրանք միասին վերցրած՝ Վեցամատեան են կոչուում. բայց արդէն Եզրասի ժամանակներից (444)

յայտնի է, որ դա բաժանուած է եղել և առանձին գիրք դարձել Բ. օրէնք և Քահանայական օրէնագիրք կոչուած աղբիւրներից կազմուած:

Դատաւորաց գիրքը.—կազմում է սրա շարունակութիւնը: Դատաւորները չեն գրել այս գիրքը, բայց այդպէս է կոչուում, որովհետև դատաւորների մասին է պատմում: Սրանից իմանում ենք մենք Իսրայէլի վիճակի մասին Քահանայ մտնելուց յետոյ՝ մինչև թագաւորութեան հաստատութիւնը Իսրայէլի մէջ: Այս պատմական գործի ծրագիրը հետևեալն է. Աստուծոց հեռանալուն իբրև հետևանք լինում է Իսրայէլի օտարի լծի տակ ընկնելն ու նեղուելը, սրան հետևում է ժողովրդի զղջումն ու դարձը, իսկ այս կրօնական տրամագրութեան անմիջական հետևութիւն դառնում է ցեղերի ազատութիւնը դատաւորների ձեռքով: Այս ծրագրով հետզհետէ նկարագրուում են 12 դատաւորների և ուրիշ մի քանի անձնաւորութիւնների հերոսութիւնները: Իրանցից վեցի մասին երկար է պատմուած, վեցի մասին կարճ, շատ անգամ միայն անուններն են յիշուած, որով հնարաւորութիւն ունենք վեց գլխաւոր և վեց երկրորդական դատաւորներ որոշելու: 12 թիւը ցոյց է տալիս, որ գրքի հեղինակի կամ խմբագրողի ձգտումը եղել է Իսրայէլի 12 ցեղերից մի մի դատաւոր ներկայացնել:

Վերլուծելով դատաւորաց գիրքը իբրև պատմագրական մի արտագրութիւն՝ կտեսնենք, որ հինգ գլխաւոր դատաւորները—Նհուդ, Իբրորա-Բարակ, Գէդէոն, Յնիթախ և Սամսոն—ժողովրդական հերոսների ընդթ են կրում, իսկ մնացածներն՝ ինչպէս նաև վերոյիշեալ ծրագիրը՝ մեծաւ մասամբ Բ. օրէնք կոչուած աղբիւրի

և նրա խմբագրողի գործը պէտք է համարել: Յատկապէս հին ժողովրդական բանաստեղծութիւն է այսպէս կոչուած Իբրորայի երգը (Ն. գլ.), որի բացիօնալիստական տարբեր մշակութիւնն է Դ. գլ.: Բարձր բանաստեղծական ոգևորութեամբ երգուում է մի պատերազմ, նորա պատճառած հոգսն ու երկիւղը, ուրախութիւնն ու յաղթանակը: Այս երգի թարմութիւնն ապացոյց է, որ ժամանակակցի և ականատեսի երգ է դա և հաւանօրէն մեզ հասած Իսրայէլի գրականութեան ամենահին հատուածը, որովհետև զբանից առաջ և յետոյ եղած գրականութիւնը ենթարկուած է անխիղճ ոչնչացման Իսրայէլի կրօնական հայեացքի և կուլտուրայի փոփոխութեան պատճառով: Դ. գլուխը համեմատելով այս երգի հետ՝ կարող ենք նկատել յետագայ բացիօնալ մտածողի և պատմագրողի գործը, որի մէջ միմեանց հետ շփոթուել են երկու աւանդութիւններ, ա. Քահանայացոց Եաբին թագաւորի պատերազմի պատմութիւնը, բ. Սիսարայի 900 երկաթեայ կառքերով կուռել Բարակի և Իբրորայի հետ:

Գէդէոնի պատմութիւնը (2—1) նոյնպէս բազմաթիւ աւանդութիւններից ի մի ձուլուած է: Ը. 4—27 Գէդէոնը իւր ցեղի 300 կտրիչներով մաղիամացոց երկու թագաւորներին հալածում և սպանում է, որովհետև նոքա իւր եղբայրներին սպանել էին. Ե—1 գլուխներում Գէդէոնը աստուածային կոչմամբ դատաւոր է դառնում ամբողջ Իսրայէլի վրայ և Մաղիամացոց երկու տարբեր անուն կրող թագաւորներին ըռնում և սպանում է: Պարզ է՝ որ այս երկու պատմութիւնները դուրլէտներ են: Ը. գլխի պատմուածքը աւելի հնագոյն է քան 2. և 1. գլուխներին: Հին աւանդութիւն է

նաև թ. գլուխը, որը Գէդէոնի որդու, Արիմելէքի թագա-  
ւորութեանն է վերարարեցում: Սամսոնի պատմութիւն-  
ները ժԴ—ժԶ. գլուխներում՝ կրում են ժողովրդական  
պատմուածքի բնոյթ: Այնպէս որ Բ. օրէնք աղբիւրն իւր  
առաջ գտել է այս հինգ ժողովրդական հերոսների աւան-  
դութիւնները և վերցրել իւր պատմական շրջանակի մէջ:  
Մնացած դատաւորների աննշան պատմութիւնները և  
ամբողջ ժամանակագրութիւնը խմբագրողի բացիօնալ  
յերիւրումն է, աստուածաբանական պրակմատիզմի ար-  
զիւնք: Դժուար թէ այդ դատաւորները պատմական  
անձնաւորութիւններ լինեն. նաև ժամանակագրական  
այսպիսի թուերը՝ ինչպէս 20, 40, 80 կասկած են ա-  
ռաջացնում: Ժամանակագրական այս յերիւրանքի բա-  
նալին տալիս է մեզ Գ. թագաւորութեան Զ. գլ. որի  
համաձայն Իսրայէլի եգիպտոսից դուրս գալուց մինչև  
տաճարի շինութիւնը անցել է 480 տարի. 480 կազմ-  
ուած  $12 \times 40$ -ից. 40 թիւը Իսրայէլացոց հաշուով մի  
սերունդ էր նշանակում: Այնպէս որ այս հաշուով 12 սե-  
րունդ էր անցել եգիպտոսից դուրս գալուց մինչև տա-  
ճարի շինութիւնը: Իսկ այս ժամանակագրութեան մէջ  
փոքր դատաւորները չեն կարող տեղաւորուել, որովհե-  
տև յիշուած 12 սերունդը կազմուուած է Մովսէսից,  
Յեսուից, Օթնիէլից, Ենուզից, Բարակից, Գէդէոնից,  
Յեփթախից, Սամսոնից, Հեղիից, Սամուէլից, Սաւուզից  
և Դաւթից: Եթէ մենք փոքր դատաւորներին դուրս հա-  
նենք և վերև յիշուած դատաւորների տարիների թուերը  
հաշուենք՝ կստանանք  $40 + 20 + 40 + 80 + 40 + 40$   
 $+ 6 + 20 + 40 + 20 + 20 + 40$  և  $+ 3$  (Սողոմոնի թա-  
գաւորութեան տարիները մինչև տաճարի շինութիւնը)  
 $+ 71$ , որը հաշուած է անիշխանութեան տարիների

կստանանք ուղիղ 480 տարի: Ուրեմն էլ ուր պիտի  
տեղաւորել մնացած 5 փոքր դատաւորներին, որոնց  
տարիների գումարը  $23 + 22 + 7 + 10 + 8 = 70$  կամ 71  
տարի է անում, այսինքն ճիշտ այնքան տարի, որքան  
վերև անիշխանութեան տարիներ է հաշուած: Այս բո-  
լոր հաշիւներից պէտք է եզրակացնել, որ այս փոքր  
դատաւորների պատմութիւններն ստեղծուել են մի  
խմբագրողի ձեռքով և տեղաւորուած Բ. օրինաց աղ-  
բիւրի ժամանակագրական սխեմայի մէջ, առանց լաւ  
հազարած լինելու: Իսկ հինգ մեծ դատաւորների կամ  
ժողովրդական հերոսների պատմութիւնը վերցուած է  
Նահվիստական և էլոհիստական վիպական աղբիւրներից:

Առանձին ուշագրութեան արժանի են ժէ—ԻԱ,  
գլուխները, այստեղ խօսք է լինում մի քահանայի՝  
Մելսայի մասին, որ Նփուա և Թերափիմ էր պատրաս-  
տել և դբանով դարձել Դան ցեղի քահանան:

Մնցնելով Դատաւորաց գրքի ներկայ կազմու-  
թեանը՝ մենք երեք շրջաններ ենք զանազանում: Ա)  
Ենովիստը խմբագրել, միացրել է Նահվիստ և էլոհիստ  
աղբիւրներից հանած հինգ մեծ դատաւորների պատ-  
մութիւնը: Բ) Երկրորդ օրինաց խմբագիրը մշակել է  
այդ գործը իւր հայեցողութեան համաձայն: Գ) Քա-  
հանայական օրէնքի խմբագրողը մի երրորդ անգամ է  
մշակման ենթարկել և այս գործին կցել է փոքր դա-  
տաւորների մասին իւր յերիւրած պատմութիւնը: Դ)  
Մի ուրիշ ձեռք վերջին անգամ սրբագրել է այս գոր-  
ծը: Սա տեսնելով՝ որ մի հարձի որդի՝ Արեմելիքը դա-  
տաւոր է համարուած, ծանօթութիւն է աւելացրել, որ  
դրան դատաւոր չպէտք է հաշուել և ստեղծել է մի  
նոր դատաւորի՝ Սամկարի պատմութիւնը:

Թագաւորաց գրքերը համեմատաբար պատմական աւելի մեծ արժէք ունեն: Մի ամփոփ միութիւն են կազմում Ա. Թագ. Ա.—ԺԵ գլուխները, որոնք նուիրուած են Սաւուղին: ԺԵ գլխից Դաւիթն է բարձրանում պատմութեան բեմը: Բայց հէնց այդ ամփոփ հատուածը կազմուած է երկու տարբեր շերտերից: Ա) Թ1—Ժ16 ԺԱ. ԺԳ. ԺԴ գլուխները, ուր թագաւորութեան հիմնարկութիւնը Իսրայէլի մէջ համարուած է ըստ ամենայնի ցանկալի մի իրողութիւն, իսկ Բ) շերտը Ա.—ԺԷ գլուխներում մնացած հատուածները, ուր այդ նոյն թագաւորութիւնը համարուում է ապստամբութիւն Աստծու դէմ: Ա. հատուածը բղխել է Եհանայի ստաւից, իսկ Բ.—ը էլօհիստից. իսկ երկուսը միմեանց հագցնողը կամ միմեանց հետ ձուլողը Եհանայի խմբագիրն է:

Նոյն Եհանայի ստաւից և էլօհիստի ստաւից է կազմուած Ա. Թագ. ԺԵ—Բ. ԹԳ. Ը. ԳԼ. թէպէտ այստեղ էլ պակաս չեն խմբագրական ուրիշ յետագայ ծագում ունեցող կտորներ: Եհանայի ստաւից է բղխել Բ. Թագ. Թ.—ԻԴ. գլուխները: Այս հատուածը ներկայացնում է երբայական պատմագրութեան զարգացման գագաթնակէտը: Բոլոր անհատ անձնաւորութիւնների բնոյթագիրն այնպիսի հոգեբանական նրբութեամբ և վարպետութեամբ է արած, պատմուածքն այնքան կենդանի է, որ կարելի է եղբակացնել, թէ դա ահանատեսի գործ է:

Թագաւորաց այս երկու գրքերի մէջ կան զուտ բանաստեղծական կտորներ. ա) Աննայի երգը, որը մի սաղմաս է, հետևաբար բարելոնական գերութեան ժամանակակից մի հեղինակութիւն և յետագայ ներմու-

ծում պէտք է համարել: Բ) Աղեղի երգը, այսպէս է կոչուում Դաւթի ողբը Սաւուղի մահուան առթիւ. հոգեբանօրէն ճշմարիտ և խոր զգացմունքի արտայայտութիւն է դա: Ոչ մի հիմունք չունենք կասկածելու, որ յիշուելի դա Դաւթի հեղինակութիւնն է. որովհետև դա կրում է հնութեան կնիքը և պէտք է համարել Դաւթի բանաստեղծական տաղանդի լաւագոյն արդիւնքը: Գ) Բ. ԹԳ. ԻԲ. ԳԼ. մի մեծ օրհնութիւն, որը ժԸ սաղմոսի հետ նոյնն է. հետևաբար չի կարող Դաւթի ժամանակի արդիւնք համարուել: Դ) Բ. ԹԳ. ԻԳ. 1—7 Դաւթի վերջին խօսքերը, որոնք մեսիական մտքերի արտայայտութիւն են և Եսայի մարգարէի ապրած VIII դարից առաջ լինել չէին կարող. նաև դժոխքի գաղափարը, որն այստեղ յիշուած է, այդ կտորի յետագայ ծագման ապացոյց է:

Գ. և Դ. Թագաւորաց գրքերում պատմուած է Իսրայէլի վիճակը մինչև գերութիւնը:

Գ. ԹԳ. Ա.—ԺԳ գլուխների պատմութիւնը կազմում է նախորդի շարունակութիւնը և ծագում է Եհանայի ստաւից, բայց այստեղ յիշուած է մի ուրիշ գրաւոր աղբիւր (Ը. 53), որն անուանուում է «գիրք ուղղութեանց». շատերն այս գրքի անունը թարգմանում են՝ գիրք հերոսների երգերի:

Սողոմոնից յետոյ ոչ մի թագաւորի մասին մանրամասն չի պատմուում: Մնացած ամբողջ գործը մի միութիւն է ներկայացնում: Այստեղ էլ ստեղծուած է մի սխեմա. նախ համառօտ պատմուած է թագաւորի գործերը, նշանակուած է Յուդայի թագաւորների տարիքը և նրանց թագաւորութեան տարիները. նրանց մօր անունն է յիշոււմ, մահն ու թագումը, իսկ Իսրայ-

յէլի թագաւորների թագաւորութեան տարիներն ու մահն է միայն յիշատակում: Պարզ է, որ այս գործի հեղինակը դիտակցաբար Իսրայէլի եկեղեցական պատմութիւնն է ուզում գրել և բոլոր թագաւորներին չափում է եկեղեցական աստուածաբանական մասշտաբով: Աշխարհական պատմութիւնով նա չի հետաքրքրուում. իսկ նրանց, որոնք կը ցանկային մանրամասնութիւնն իմանալ, յանձնարարում է այսպէս կոչուած «Յուդայի և կամ Իսրայէլի թագաւորների ժամանակագրութիւնը» կարդալ: Հաւանական է, որ ինչպէս արևելեան բոլոր պետութիւններում, նոյնպէս և Իսրայէլում գոյութիւն ունէին պաշտօնական տարեգրութիւններ, որոնց մէջ թագաւորները, նրանց գործերը և պաշտօնեաները նշանակուում էին: Այս տարեգրութիւններն ընդհանուր գծերով ճշգրիտ կլինեն և ժամանակագրութեան համար խիստ գնահատելի աղբիւր: Բայց հարց է, թէ այս գրքերում յիշուած աղբիւրն իսկապէս Իսրայէլի և Յուդայի թագաւորների դիւանական արձանագրութիւնն է: Իսրայէլի մէջ այնքան գահական կռիւներ և ապօրինի գահաժառանգութիւններ են տեղի ունեցել, որ դրանց պատմութիւնը ոչ մի կերպ այդպիսի դիւանական ժամանակագրութիւններում տեղ բռնել չէր կարող: Ինչպէս պէտք է գահը յափշտակող թագաւորները թոյլ տային այդ անախներում արձանագրել իրենց ապօրինի վարմունքը: Նոյնպէս մեծ հարց է թէ, եթէ այդպիսի պաշտօնական դիւանագրքեր գոյութիւն էլ ունենային, ամեն մարդու մատչելի կլինէին: Այս հիմունքներով պէտք է ընդունել, որ վերոյիշեալ աղբիւրը ոչ թէ դիւանական փաստաթղթեր է ակնարկում, այլ մի ինչ որ պատմական գրք-

ուածք: Ինչպէս երևում է այդպիսի երկու գրուածքներ կային մէկն Իսրայէլի և միւսը Յուդայի թագաւորութիւնների համար, մի երրորդ էլ, որը վերաբերում էր Սողոմոնի թագաւորութեանը: Հաւանորէն ժամանակագրութիւնը և յատուկ անունները նա վերցնում է այդ աղբիւրներից: Այդ երեք աղբիւրների ծագման տեղի և ժամանակի մասին որոշ բան ասել չի կարելի, որովհետև նրանք կորած են, չկան:

Այժմ անցնենք այն խնդրին, թէ Գ. և Գ. թագաւորաց գրքերի հեղինակը կամ խմբագրողը երբ է գլուխ բերել իւր գործը: Հիմքեր կան կարծելու, որ այդ եղել է գերութիւնից առաջ մօտ 600 թուերին, որովհետև հեղինակն այս գրուածքներում առաջին մարգարէների հայեցակէտն է պաշտպանում: Հաւանորէն այս գրուածքը նորից մշակման է ենթարկուել 550 թուին հրէաների բարելոհական գերութեան մէջ գտնուելու ժամանակ: Այս նոր խմբագրողը մտցրել է սխնարօնիգմը, որը մեծ մասամբ սխալ է:

Բնաւ զարմանալի չէ, որ Իսրայէլում պատմագրութիւնը ծաղկեց այս ժողովրդի քաղաքական կեանքի անկման և գերութեան շրջանում: Այդ նոյն երևոյթը մենք նկատուում ենք նաև հայերիս մէջ: Ինչ որ կորցում ենք՝ դառնում է ասելի գնահատելի: Իսրայէլը կորցրեց իւր քաղաքական անկախութիւնը և ապա նոր սկսեց գնահատել այն, հետաքրքրուել նրանով: Անցած մեծութեան և փառքի մէջ ժողովուրդը մխիթարութիւն էր փնտռում. այն ինչ այդ ժողովրդի բանիմաց անձերի համար անցեալն ուսումնասիրելիս ծագում էին դժուար հարցեր. ինչպէս եղաւ, որ Աստուած իւր ժողովուրդն ու երկիրը իւր տաճարը հեթանոսներին

մատնեց: Այս հարցի պատասխանը նրանք գտան մարգարէների աշխարհայեացքի մէջ: Իսրայէլի անցած մեղքերն ու սխալներն են պատճառը, որ նա կորցեց անկախութիւնը: Սա մի պատմական տեսութիւն էր անցեալի նկատմամբ, բայց ունէր իւր անագին գործնական նշանակութիւնն ապագայի նկատմամբ: Պատմական այս տեսութիւնը պիտի խրատէր և զգուշացնէր ժողովրդին, որ նա յիշէր իւր փառաւոր անցեալը և աշխատէր վերանորոգել այն: Նոր Իսրայէլը պէտք է մեղքեր և սխալներ չանէր:

Մնացորդաց գրքերը Թագաւորաց գրքերից աւելի պակաս պատմական արժէք ունեն: Այս գրքերի բովանդակութիւնն սկսում է աշխարհի ստեղծագործութիւնից և վերջանում է 538 թուականով, երբ Կիւրոսը իրաւունք է տալիս երբայեցիներին վերադառնալ Պաղեստին և շինել Երուսաղէմի տաճարը: Սոյն գրքերի այս վերջաբանը ցոյց է տալիս, որ սրանք յամենայն դէպս ամենավաղ պարսկական տիրապետութեան շրջանում գրուած պիտի լինեն: Այս բանը պարզ է նրանից, որ հեղինակն այս գրքում փողային հաշիւները դահեկաններով է անում, այսինքն այն փողով, որը Դարեհ Ա.-ն է կտրել տուել: Կան մինչև անգամ հիմունքներ ենթադրելու, որ յունական շրջանում են գրուած զբանք: Այսպիսի դէպքում պարզ է, որ նրանց հեղինակը պէտք է օգտուած լինի նախընթաց պատմական գրուածներից և իրաւ մենք գտնում ենք զուգահեռական պատմութիւններ թագաւորաց և մնացորդաց գրքերում՝ շատ տեղ բառացի: Հակառակ այս կախման դրութեան՝ մնացորդաց գրքերը շատ կողմերով տարբերուում են նախկին պատմական գրուածներից: Ընդհանուր առմամբ մնացոր-

դաց գրքերի արժանահաւատութիւնը շատ կասկածելի է: Թուերը սարսափելի չափազանցուած են. հեղինակը միլիոնների հետ է խաղում: Ամեն մի դժբախտութիւն մեղքի հետևանք, իսկ բախտաւորութիւնը բարեպաշտութեան վարձատրութիւն է համարուում: Ինչ որ այս կրօնական հայեացքի չի յարմարուում, այդ մասին լուութիւն է պահպանուած. Դաւթի և Սողոմոնի վարչութեան թերութիւնների մասին ոչ մի խօսք չի ասուած: Յուդան աւելի մեծ տեղ է բռնում այս գրքերում: Այնպէս որ այս պատմական գրքերը ոչ մի պատմական արժէք չունեն: Զարմանալի կերպով դրանք մեծապէս հետաքրքրուում են զևտացի պաշտօնեաներով և տաճարի երգեցողութեամբ: Հաւանական է ենթադրել, որ այս գրքերի հեղինակն եղել տաճարի պաշտօնեաներից:

Այս գրքերում յիշուած աղբիւրները երկու խմբի են բաժանուում՝ պատմական և մարգարէական: Պատմական աղբիւրներ հեղինակը շատ անգամ է յիշում: Անշուշտ նա ունեցել գրաւոր աղբիւրներ, բայց այդ աղբիւրները ոչ թէ պատմական այլ վարդապետական արժէք ունին: Պէտք է ընդունել, որ յետագայ ժամանակներում կազմուած էին լաւ լաւ թագաւորների մասին խրատական պատմուածքներ—մոնոգրաֆիաներ, այսպէս, կոչուած միտրաշներ, որոնցով երբայեցի մոնթերին կարդացնում էին: Ահա այդպիսի աղբիւրներից, որոնք կազմուել էին զանազան ժամանակներում և զանազան հեղինակներից, օգտուել է այս գրքերի հեղինակը: Մարգարէական աղբիւրներ ևս յիշուած են: Սրանք էլ դարձեալ նոյնատեսակ գործեր կամ միտրաշներ են

եղել, միայն յօրինուած ոչ թէ ուէ թագաւորի, այլ ծանօթ կամ անծանօթ մարդարէի մասին:

Բայց այս աղբիւրներն էլ չեն փոխում մնացորդաց գրքերի արժէքը: Դրանք պատմական գրական արուեստի կատարեալ անկման աստիճանն են ցոյց տալիս, թէպէտ հանդէս են բերում մի մեծ գաղափար, որի համաձայն մարդկային ցեղը աստիճանաբար կըրթուում է. աստուածային յայտնութիւնը պատմութեան մէջ աւելի և աւելի որոշութեամբ հանդէս է գալիս: Ինչպէս մնացորդաց նոյնպէս և Եզրի և Եսեմիայի գրքերը պատկանում են յետ գերութեան պարսկական ժամանակներին: Եզրասի Ա.—Ձ գլուխները պատմում են Իսրայէլի վերադարձի և տաճարի շինութեան մասին: 538-ին տեղի է ունենում նրանց դարձը, 537-ին սկսում են շինել տաճարը, բայց միաժամանակ կանգ է առնում, մինչև որ 520-ին Դարեհը նորից վերաշինելու իրաւունք է տալիս, որը և վերջանում է 515 թուին: (Է—Ժ) Եզրաս դպիրը Արտաշէս թագաւորի հրամանով և հրահանգներով գալիս է Երուսաղէմ և 458 թուին մի ժողով է գումարում: Այստեղ վերջանում է Եզրասի բովանդակութիւնը: Նրա շարունակողն է լինում Նեեմիան, որը Պարսից Արտաշէս թագաւորի սեղանապետն է լինում: Նա լսելով որ Երուսաղէմի պարիսպները քանդուած և դարպասներն այրուած են, խնդրում է թագաւորից՝ իրեն Երուսաղէմի փոխարքայ կարգել. այդպէս էլ լինում է: Սա գալով՝ ձեռնարկում է վերաշինել Երուսաղէմի պարիսպները հակառակ Յուդայի թշնամիների ծաղրին: Յայտարարում է պարտքերի թողութիւն և հոգս է տանում պարիսպների պաշտպանութեան համար: 444

թուին նա կարդալ է տալիս Եզրի բերած քահանայական օրէնքները և ընդունել է տալիս:

Այս համառօտ բովանդակութիւնից արդէն երևում է, որ Եզրի և Նեեմիայի գրքերը մի կապակցուած պատմական գործ չեն: Սրան իրրև փաստ ծառայում է նաև այն հանգամանքը որ Դ—Ձ. և Է գլուխները արամեական բարբառով են գրուած. սրանից գատ Եզրասի և Նեեմիայի մասին այս գրքերում երբեմն առաջին դէմքով է խօսուում, իսկ երբեմն երրորդ դէմքով: Այն հատուածներում, երբ առաջին դէմքով է խօսուում, մենք ունենք երբայական մեմուռուի իսկական օրինակներ մեր առաջ: Եզրաս և Նեեմիան նշանակել են իրենց ժամանակի կարևոր դէպքերը, յետոյ այդ յիշատակարաններից օգտուել է մի ուրիշ հեղինակ, որը և կազմել է այս գրքերը: Ուշադրութիւն դարձնելով այն հանգամանքի վրայ, որ այս գրքերի լեզուն, ոճը, տեղեկեցը շատ նման է մնացորդաց գրքերին, կարելի է հետևեցնել, որ մնացորդաց գրքերի հեղինակն է կազմել այս գրքերը: Նա այս վերջին գրքերը յօրինելու համար օգտուել է ա) 450 թուին տաճարի և պարիսպների շինութեան առթիւ առաջ եկած փաստաթղթերից, որոնք արամեական բարբառով գրուած էին: բ) Եզրասի և Նեեմիայի մէմուռաներից. գ) խմբագրողի իրա հատուածներից:

Հոովթի գիրքը.—Իբրև գրական-պատմական երկ առանձին արժէք ունի այս գիրքը, որը թարմ բանաստեղծական ոգով գրուած մի իդիլիա է: Հուրթը մի մովարացի կին էր, մի հեթանոսի աղջիկ, որը դառնում է հրէուհի և իւր բարեպաշտութեան պատճառով արժանանում է Դաւիթի մամը լինելու:

Սպասելի էր, որ այս գիրքը Ա. Թագաւորութեան գրքից յետոյ տեղ բռնէր, այն ինչ նա տեղաւորուած է պատմական գրքերի վերջումը, ինչ որ ապացոյց է այս գրքի յետագայ ծագման: Սրա լեզուն շատ է մօտենում արամէական բարբառին: Գրողի ձգտումն է ապացուցանել՝ թէ կարող է մի հեթանոսի աղջիկ ևս մի իսրայէլական ընտանիքի լաւ մայր դառնալ. Շատերն այդ տենդենցի հիման վրայ այս գիրքը հին են համարում, Բայց այս հիմքն ամուր չէ. և մինք կարող ենք այս գիրքը իբրև մի տեսակ բողոք համարել Եզրասի և Նեեմիայի վարմունքի դէմ, որոնք բռնի ոյժով ստիպում էին իսրայէլացիներին հեռացնել իրենց կանանց, եթէ դրանք օտարուհի էին: Գրքի հեղինակն ուզում է ցոյց տալ, որ ամուսնութեան սրբութիւնը և օրհնութիւնը հիմնուած է զգացմունքի և ոչ թէ մարդու կամ կնոջ ծագման վրայ:

Եսթերի գիրքը մի աւելի զօրեղ բայց ոչ գեղեցիկ միտումով գրուած աշխատութիւն է: Այս գրքում հանդէս են գալիս հրէայ ժողովրդի բոլոր տգեղ կողմերը: Սա մի պատմական ուման է, որտեղ ցոյց է տրուած, թէ ինչպէս Մուրտքէ հրէան իւր գեղեցիկ աղջկայ շնորհիւ կարողացել է վրէժ հանել հրէայ ազգի թշնամի Համանից: Այս գրքի ծագման տեղի և ժամանակի հարցը կապուած է այն հարցի հետ, թէ երբ և ճրտեղ է առաջ եկել Պուրիմի տօնը: Գրքի բովանդակութիւնից երևում է, որ դա չի գրուած Պարսից Աքամենիտեան հարստութեան ժամանակ, որովհետեւ նրանց մասին խօսուում է անցեալով. լեզուն ևս յետագայ արամէական ոճի բոլոր յատկութիւններն ունի: Այն սարսափելի հրէական ատելութիւնը, որը տարածուում է բո-

լոր ոչ հրէայ ժողովրդների վրայ, ծնունդ է Սելևկեան Անտիոքոս Եպիփանէս Թագաւորի հալածանքների, որով և ապացուցուում է, որ այս ումանը գրուած է Մակարէացոց Սելևկեանների դէմ մղած ապստամբական պատերազմներից յետոյ, այսինքն մօտաւորապէս 130-ական թուերին. որովհետեւ ազատութեան պատերազմներից յետոյ՝ հրէական ազգային ոգին արտայայտուեցաւ ֆանատիկոսի կատաղութեամբ դէպի բոլոր ոչ հրէականը: Բնորոշ է, որ ումանի տեղը Պարսկաստանն է համարուած. դրա պատճառն այն է, որ յիրաւի պուրիմի տօնը Պարսկաստանում է ծագել. այնտեղ կոչուում էր ֆարվարտիոն, ուրիշները այս վիճակի կամ պուրիմի տօնի տեղը համարում են Բարելոնը, ուր գաքմուքի տօնը նոյն բնոյթն ունէր:

## Բ. Գ. Ա. Ո. Ի. Խ.

### Մարգարէութիւն

Մարգարէական գրուածքները գեղարուեստական գրականութեան մի տեսակն են: Մարգարէները բնութիւնից բանաստեղծներ են եղել: Ինչպէս բոլոր հին ազգերի մէջ՝ այնպէս և Իսրայէլում պատգամախօսութիւնը բանաստեղծական արուեստի բնոյթ էր կրում: Մարգարէական գրականութեան մէջ երկու որոշ տեսակներ կարելի է զանազանել՝ տաղաչափական և ազատ: Սկզբնապէս մարգարէները իրենց յայտնութիւններն ուժեղ զգացմունքով, բարձր ոգևորութեամբ, կրակոտ ճառերով յայտնել են ժողովրդին: Գեղագիտական կողմից այս ճառերը համաշխարային կրօնա-

կան բանաստեղծութեան մէջ իրենց նմանը չունեն։  
 Մարգարէութիւնները բազմաբովանդակ են. այն-  
 տեղ կարելի է գտնել Իսրայէլի ամբողջ կեանքը: Բազ-  
 մաթիւ պատգամախօսութիւններից զատ՝ կան մարգար-  
 ների իրենց մասին կենսագրական կտորներ, մոնօլոգ-  
 ներ, վիճարանութիւններ, տեսիլներ և այլն: Պատ-  
 գամախօսութիւնը բաժանուում է երկու խմբի՝ հայեցո-  
 ղականի և ունկընդրականի կամ աստուածային տե-  
 սիլների և աստուածային խօսքերի, որոնք սովո-  
 բաբար սկսուում են «Այսպէս ցոյց տուաւ ինձ Տէր»  
 կամ «Այսպէս ասաց ինձ Նահվէն»: Մարգարէութեան  
 մէջ էական տեղ են բռնում այն տեսիլները, որոնց  
 շնորհիւ մարգարէն խմաստուն է դառնում և բացատ-  
 րում աստուածային խորհուրդները: Տեսիլները լինում  
 են պարզ և բարդ, համառօտ կամ մանրամասն: Նրանք  
 վերցուած են լինում սովորական կեանքից, բայց այս  
 սովորական կեանքի պատկերը պիտի ունենայ և բա-  
 ցատրի մի խոր միտք ժողովրդի ներկայի կամ ապա-  
 գայի վերաբերմամբ: Երբեմն էլ այդ տեսիլների շնոր-  
 հիւ մարգարէն խորամախ է լինում աստուածային  
 խորհրդի մէջ և տեսնում Նահվէին և նրա շրջապատը:  
 Վիզիոնի ոճը նկարագրական է. մարգարէն հաղորդում  
 է, ինչ որ տեսել է: Սորհրդաւորն այն է, որ մարդկա-  
 յին հոգին բաւեր չի գտնում անասելին նկարագրե-  
 լու: Այնուամենայնիւ արեւելեան հարուստ երեակայու-  
 թեան ստեղծած գոյները դարձնում են այս տեսիլները  
 զօրեղ զեղարուեստական: Սովորական է խօսքի վեզիոնը,  
 երբ մարգարէն լսում է Աստուծու կամ նրա շրջապա-  
 տողների խօսքը: Տեսիլների հետ սերտ կապ ունին ե-  
 բազները, որոնք միայն երեմիայի համար յայտնութեան

նշանակութիւն չունեն. բայց շատերը և մանաւանդ  
 Եղեկիէլը դառնում են յաճախ երազներ մեկնող:

Էական տեղ են բռնում նոյնպէս մարգարէների  
 ճառերը կամ պատգամները: Նրանք իրենց համարում են  
 Աստուծու պատգամներ ժողովրդի առաջ: Նրանք  
 իրենց «Նս»-ը երբեմն Աստու «Նս»-ի հետ նոյնացնում  
 են: Այս պատճառով խիստ դժուար է որոշել, թէ իս-  
 կապէս ո՞ր խօսքը Աստուծուն և ո՞րը մարգարէին է վի-  
 բարերում. ընդհանուր առմամբ մարգարէն է խօսում,  
 բայց Աստուծու կողմից: Մարգարէն բացարձակապէս  
 հաւատացած է իր խօսքի աստուածային ծագմանը. այդ  
 հանգամանքն է, որ ոչ թէ տալիս նրանց ոգևորութեան  
 և յայտնութեան ձևին: Զարմանալի բազմազան են  
 մարգարէների ճառերը. այնտեղ կան խոստումներ և  
 սպառնալիքներ, մեղքի նկարագրութիւններ, նախա-  
 զգուշացումներ, պատմական յետադարձ ակնարկներ,  
 վէճեր, կրօնական և պրօֆան ժողովրդական երգեր,  
 ողբերգութիւններ, ժամապաշտութեան վերաբերեալ  
 կտորներ, առակներ և այլն: Գրական այս բոլոր տե-  
 սակները մարգարէին չեն. նրանք օգտուել են ժողով-  
 րդական զբաղանդութեան բոլոր ձևերից: Մարգարէու-  
 թեան մէջ առանձին տեղ է բռնում գուշակութիւնը,  
 որոնք վերաբերում են թէ իսրայէլին և թէ օտար ազ-  
 գերին մանաւանդ Ասորեստանին, Բաբելոնին և Եգիպ-  
 տոսին: Բոլորովին յանկարծակի ձևով սկսում են յա-  
 ճախ իրենց պատգամը. չեն յիշուում ո՛չ մի անուն և  
 ո՛չ մի թիւ: Իրար յետեից շարում են զանազան պատ-  
 կերներ, որոնցից մի քանիսը մեզ համար, որ դարերով  
 և քաղաքակրթութեամբ հեռու ենք կանգնած, անհաս-  
 կանալի են մնում: Մութն է օրինակ Աստուծու այն

ծառայի խորհրդաւոր յայտնութիւնը, որը բոլորիս մեղքերն իւր վրայ է կրում, անարգութեամբ, տանջուում: Անհասկանալի են մնում յատկապէս այն պատկերները, որոնց մէջ հին առասպելական տարրեր կան: Այնուամենայնիւ կայծակի ցայտելու ցնցող տպաւորութիւն է թողնում մարգարէների պատգամախօսութիւնների ոճը, որով ապագայի դժբախտութիւններն են գուշակում: Չարհուրեցնում են ընթերցողին այն պատկերները, որոնց մէջ Աստուած յայտնուում է իբրև մի հերոս, որը սարսափելի փորձանք պիտի բերի ժողովրդի գլխին:

Մարգարէների հոգու մէջ կայ մի մեծ հակադրութիւն. մի կողմից նրանք խորհրդաւոր մտածողներ են, միւս կողմից իրական կեանքին ամուր են կպած. միտախիցիզմը և բէալիզմը միացնում են իրենց անձի և գրուածների մէջ: Հայեցողական վիճակում են, բայց իրենց տեսածը ռեալ կեանքն է: Օր. Նսայու մէջ մի հատուած նկարագրում է Բարելոնն աւերուած, ճահճի մէջ ընկղմած, իսկ Սիօնը վայրի էշերի ասպարէզ դարձած: Ոչ մի բան այնքան զօրեղ չէ մարգարէների մէջ՝ որքան կիրքը. ոչ մի բան նրանց համար բաւարար ուժեղ չէ նկարագրելու ապագայի սարսափները: Կան նաև փրկութիւն գուշակող մարգարէներ. այս դէպքում նրանք սովորաբար օգտուում են ժողովրդի մէջ մեծ սիակաւն թագաւորութեան մասին եղած յոյսից, որը երկու կողմ ունէր. մէկի համաձայն Աստուծու օրը կամ Մեսիայի գալուստը չարիքների մի սարսափելի տեսարան պիտի պատրաստէր, իսկ միւսի համաձայն մի երանաւէտ ապագայ: Մարգարէներն իրենք իրենց համարել են Աստուծու պատերազմի փող, որն այնպէս

ուժեղ պիտի հնչեցնել, որ ահանջներն անգամ պատուեն: Նրանք բնութեան հարազատ որդիներն են և մրկի թափով էլ խօսել գիտեն: Կան նաև բազմաթիւ քնարական հատուածներ, հիմներ, ցնծութեան, երկրագործական կեանքի, սուգի, ուխտագնացութեան, ապաշխարութեան, գինու, պահապանի, ժամապաշտութեան երգեր և մոնոլոգներ, որոնցով խիստ նշանաւոր է Երեմիան:

Մարգարէներն իրենց գուշակութիւնն անում են եզրակացնելով այն դրութիւնից, որի մէջ ապրում էր ժողովուրդը: Նրանց քարոզի հիմնական միտքն այն է, որ ցոյց տան ժողովրդին նրանց մեղքերն ու վերքերը և խրատեն, խորհրդներով զգուշացնեն՝ Աստուծու բարկութիւնից փախչելու: Նրանցից շատերը յիշեցնում էին Իսրայէլին իւր անցեալը, որպէսզի նա նրանից կրօնաբարոյական խրատներ վերցնի: Յետագայում մարգարէներին միացաւ քահանայական ոգի: Օր. Նղեկիէլը թէ քահանայ և թէ մարգարէ էր, որը ժողովրդին ուզում էր սովորեցնել աստուածային օրէնքը և նրա գործադրութիւնը: Տեսնում ենք, որ մարգարէութիւնը իւր մէջ ամփոփում է հին ժողովրդական գրականութեան բոլոր տեսակները, և գուցէ հէնց այս պատճառով մարգարէութիւնը դարեր շարունակ ազդել է եւրոպական գրականութեան վրայ: Դժբախտաբար գերութիւնից յետոյ եկած մարգարէները չունեն այն թարմութիւնն ու ոյժը: Մարգարէութիւնն այս շրջանում կամաց կամաց մեռնում է և տեղի է տալիս յայտնութիւն կոչուած ֆանտաստիք գրականութեան:

Նսայի մարգարէն.—Մարգարէական գրուածներէ մէջ առաջին տեղն է բռնում Նսային, որը երուսաղէ-

մացի էր Ամուլս անունով մի աղնուականի որդի: Նորա գործունէութիւնն ընկնում է 740—701 թուերին: Նա պետութեան մէջ պաշտօն չունէր, բայց իւր անձնաւորութեան թափով և կրօնական ուժեղ հաւատից բղխած գործունէութեամբ ժամանակակիցների վրայ մեծ տպաւորութիւն է թողել: Յետագայ մի աւանդութեան համաձայն Երուսաղէմացիք նրան նահատակել են:

Նրա գիրքը բաժանուում է մասերի: 1) Ա.—ԺԲ. գլուխները ճառեր են՝ Երուսաղէմի և Իսրայէլի վրայ խօսած. 2) ԺԳ.—ԻԷ. նոյնպիսի ճառեր՝ օտար ժողովուրդների վրայ և մի գեղեցիկ նրկարագրութիւն վերջին դատաստանի մասին և վերջապէս 3) ԻԸ—ՁԳ. խօսուում է Երուսաղէմի նեղութեան և նրա հրաշալի ազատութեան մասին. 4) ԼԶ—ԼԹ մի պատմական հատուած՝ Սենեքերիմի արշաւանքի մասին:

Մանրամասն ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, որ Եսայու մարգարէական գրուածքի մէջ կիսից աւելի անվաւեր է օրինակ ԺԲ. ԺԳ. ԺԴ. ԺԵ. ԺԹ. ԻԱ. ԻԳ. ԻԴ. ԻԷ. ԼԲ. ԼԳ. ԼԴ. ԼԵ. ԼԶ—Թ.

Բ. Եսայի. Մի բոլորովին առանձին գրուածք է Եսայու մարգարէութեան Խ—ԿԶ. գլուխները, ուր Իսրայէլի մարգարէական գրականութիւնը հասել է իւր բարձրագոյն գագաթնակէտին: Այդ հատուածը սկսուում է «Մխիթարեցէք, մխիթարեցէք զժողովուրդ իմ խօսքով»: Այս գլուխները մենք վերագրում ենք մի ուրիշ հեղինակի, որովհետև թէ ժամանակագրական տեսակէտից և թէ մտքերի վերլուծութիւնից՝ երևում է, որ այս հատուածների հեղինակը Եսային լինել չէր կա-

րող: Եսային ընդհանրապէս գոչում է ժողովրդին ապաշխարելու, իսկ այս երկրորդ մասի հեղինակը, որին պայմանական կերպով երկրորդ Եսայի կարելի է կոչել, մխիթարում է ժողովրդին և աւետում նորան մօտալուտ փրկութիւնը: Մինչ առաջին Եսայու ժամանակ Ասորեստանն էր արևմտեան Ասիայի տէրը, երկրորդի համար Բաբելոնը: Առաջինը գուշակում էր Երուսաղէմի գերութիւնը, երկրորդը գերութիւնից վերադարձը Պարսից Կիւրոս թագաւորի ձեռքով, որը գործում է Աստուծու հրամանով: Խ—ԽԸ գլուխների բովանդակութիւնից երևում է, որ Կիւրոսը դեռ Բաբելոնը չէ առել, որը տեղի ունեցաւ 538-ին. այնպէս որ 538 թիւը պէտք ընդունել այս գործի համար իբրև վերջին սահման: Միւս կողմից Կիւրոսը այդ գրուածքի մէջ հանդէս է դալիս իբրև մի հզօր թագաւոր, որը մեծ գործեր է կատարել, թագաւորութիւններ է ստանալիս արել, այնպէս որ կարելի է եզրակացնել, որ այստեղ ակնարկուած է Լիւզիայի թագաւորութեան կործանումը 546-ին, ուրեմն այս գրուածքը ծագել է այդ թուից յետոյ: Ուշագրութիւն դարձնելով այս երկի ոգու վրայ, մենք միայն հիսնալ կարող ենք հեղինակի այն ուժեղ կտորների վրայ, ուր նա իւր հաւատն և ցնծութիւնն է արտայայտում իւր ժողովրդի գերութիւնից ազատուելու առթիւ: Հեղինակի ամբողջ էութիւնը լեցուած է ապագայի յոյսերով: ԽԹ—ԾԵ գլուխները դարձեալ նոյն հեղինակի գործն է երևում, միայն այն տարբերութեամբ, որ այս հատուածները անշուշտ գրուած են Բաբելոնի թագաւորութեան կործանումից յետոյ, երբ Կիւրոսը հրովարտակով թոյլ է տալիս հրէաներին վերադառնալ: Խ—ԾԵ գլուխների

մէջ առանձին ուշադրութեան արժանի են այսպէս կոչուած Աստուծոյ ծառայի երգերը: ԽՖ. ԽԳ. Ծ. ԾԲ.—ԾԳ. գլուխներում մարգարէն նկարագրում է մի տիպ, որը անմեղ տեղ տանջուում է, քաւելու համար ուրիշի մեղքերը: Այդ հատուածները ուժեղ տպււորութիւն են գործել քրիստոնէական—եւրոպական գրականութեան վրայ, մանաւանդ որ մեկնաբաններն այդ նկարագրութիւնները վերագրեցին Յիսուսին: \*)

Երրորդ Եսայից.—ԾԵ—ԿԶ գլուխների հեղինակը պէտք երկրորդ Եսայուց էլ տարբեր անձնաւորութիւն համարուի: Այս հատուածներում նկարագրուած է Իսրայէլը Պաղեստինում թշուառ, ճնշուած գրութեան մէջ. ոճն ու զազաւարները զգալի կերպով տափակացել են, այնպէս որ մենք ստիպուած ենք այս հատուածները մի երրորդ Եսայու վերագրել: Դժուար է որոշել թէ՛ յատկապէս ե՞րբ այս տարբեր հատուածները կամ հեղինակութիւնները ներկայ Եսայու մէջ միացան և ներկայ ձևն ստացան, յամենայն դէպս պէտք է ընդունել, որ ներկայ Եսային մինչև Բ. դար Ք. Ա. անընդհատ խմբագրութիւնների է ենթարկուել:

Երեւմտան Իսրայէլի Մարգարէների մէջ աւելի ազնիւ դէմք է: Եղեկիա քահանայի որդին էր նա, որն իւր մարգարէական կոչումը ստացաւ 527-ին, որպէսզի բողոքովին իւր կոչման նուիրուել կարողանայ, նա իւր հայրենի՝ Անաթովթ գիւղից տեղափոխուում է Երուսա-

\*) Ա. Եսայու մասին՝ տես աւելի մանրամասն Դ-ը. Մ. Սոստիկեանի Իսրայէլի սրբազան պատմութեան 79—103 էջերում, իսկ Բ. Եսայու մասին նոյն գրքի 140—147 էջերում:

ղէմ: Իրեն համարում է ամուր քաղաք, երկաթեայ սիւն, պողպատէ պարիսպ երկրի թագաւորի, իշխանների և ժողովրդի հանդէպ: Կէս դար շարունակ նագործեց արհամարհելով ամեն մի վտանգ: Երուսաղէմի կործանումից յետոյ 586-ին նրա հայրենակիցներն ստիպում են նրան իրենց հետ փախչել Եգիպտոս, ուր մի արժանահաւատ աւանդութեան համաձայն՝ ձերունի մարգարէին նահատակում են: Այս մարգարէութեան ԺԹ—Ի. ԻԶ—ԻԹ. ԼԳ. ԼԶ—ԽԵ. և ԾԲ գլուխները ինքնակենսագրական հատուածներ են: Այդտեղից մենք իմանում ենք, որ մարգարէն 23 տարի շարունակ բերանացի քարոզներով է զբաղուած: 605 թ. պատուէր է ստանում իւր խօսածները գրի առնել: Նա իւր մարգարէութիւնները թելադրում է և իւր աշակերտ Բարուխը գրի է առնում: Մի տարի յետոյ նա իւր մարգարէութիւնները տաճարում ժողովրդի առաջ կարգալ է տալիս որի վրայ Յովակիմ թագաւորը զայրացած՝ առնում է այդ գրուածքը, պատում և կրակի մէջ ձգելով վառում: Դրա վրայ մարգարէն ստիպուած է լինում միննոյն բանը Բարուխին նորից թելադրել աւելացնելով նոր կտորներ: \*)

Այս մարգարէութեան մէջ երկու տարբեր պէտք է զանազանել, ա) ճառեր և բ) պատմական հատուածներ: Սաղիկը ընդհանուր առմամբ Երեւմտային պէտք է վերագրել, իսկ երկրորդը՝ նորա աշակերտ Բարուխին, որը կամեցել է պատմական. եղելութիւնները յիշատակելով իւր մեծ ուսուցչի գործունէութեան հանգամանք-

\*) Այս բողոքի մասին աւելի մանրամասն տես նոյն գրքի 105—132.

ներն աւելի պարզել: Այս գրուածքի մէջ էլ կան շատ անվաւեր կտորներ, օրինակ Ծ և ԾԱ, գլուխները, ուր նկարագրած է Բարէլի կործանումը, որը Երեմիան տեսած լինել չէր կարող: Որ այս գրուածքն էլ զանազան խմբագրութիւնների է ենթարկուել՝ երևում է հէնց այն հանգամանքից, որ սրա գլուխները երբայական բնագրի և եօթանասնից թարգմանութեան մէջ տարբեր կարգաւորութիւն ունեն, դա ապացոյց է այն բանի, որ մինչև Ա. դարը Ք. Ա. զանազան փոփոխութիւններ են մտցրել գլուխների կարգաւորութեան և բնագրի մէջ:

Եզեկիէլը երբորդ մեծ մարգարէն է համարուում: Նա երուսաղէմացի մի քահանայի որդի էր, որը գերի տարուեց Բաբելոն և ընկուեց Թէլ-Աբիբ կոչուած քաղաքում: 592 թուին մարգարէական կոչում է զգում իրա մէջ, որի համաձայն 22 տարի գործում է, այսինքն մինչև 570: Թուում է թէ այդ մարգարէն արդէն իսկ իւր գործունէութեան սկզբին հասակն առած պիտի լինի: Նրա մարգարէութիւններն աչքի չեն ընկնում առանձին աւելնով: Նա իւր գրուածքի մէջ երևում է մեզ իբրև մի իմաստուն ձերուկ, որի մօտ գալիս էին Իսրայէլի գաղթական ձերերը խորհուրդ հարցնելու:

Նրա գրքի մասերն են՝ ա) մի ներածութիւն, ուր պատմուած է, թէ ինչպէս Եզեկիէլը մի հսկայ Վիզիօնի շնորհիւ մարգարէական կոչումն ստացաւ. բ) Գ—ԻՆ գլուխները, ուր ամփոփուած ձառերն ուզում են երուսաղէմի կործանման անհրաժեշտութիւնը Յուդայի անթիւ մեղքերից ապացուցանել. գ) ԻՆ—ԼԲ. գլուխներում ամփոփուած են Ամմոնիտի, Մովաբի,

փղշտացիների, Տիւրոսի, Սիդոնի և Եգիպտոսի ժողովուրդների մասին սպառնալից պատգամներ: Իսկ դ) ԼԳ—ԽԸ գլուխներում նկարագրուած է Իսրայէլի ապագան:

Դանիէլ.—Չորրորդ մեծ մարգարէն յունական թարգմանութեան մէջ համարուում է Դանիէլը. այնինչ շատ ուրիշ բնագիրներում անվաւեր է համարուած: Այս գրքի Ա—Զ-ում պատմուած է մի ինչ որ Դանիէլի և նրա երեք ընկերների գործերի մասին, թէ ինչպէս նրանք Նաբուգոդոնոսորից գերի տարուելով մեծ պատիւների են հասնում, բայց իրենց կրօնը չեն ուրանում: Է—ԺԲ պարունակում են Դանիէլի շատ տեսիլներ, որոնք բացատրուել են հրեշտակի միջոցով: \*

Ամբողջ գիրքը կարելի է մի յայտնութիւն (ապօքալիպտիք) համարել: Բովանդակութեան վրայ խորհրդաւոր քող կայ ձգուած: Բովանդակութեան քընտրութիւնից երևում է, որ հեղինակը ծանօթ է Աղեքսանդր Մեծից մինչև Անդիոքոս Եպիփանէսն ընկած ժամանակի անցքերին: Հեղինակը Նաբուգոդոնոսորին ժամանակակից մարդ լինել չէր կարող, որովհետև հաղորդում է, թէ Բաբելոնի պետութիւնը կործանուեց նորա որդու Բաղդասարի ժամանակ, այնինչ յայտնի է, որ շատ ներքին կռիւներից յետոյ՝ Նաբանէզի օրով ընկաւ Բաբելոնը: Յետոյ Բաբելոնը ընկձողը լինում է ոչ թէ Քսէրքսէսի որդին Մար Դարեհը (Զ. 1) ինչպէս ասուած է այստեղ, այլ Կիւրոսը: Նոյնպէս Շօշը երէք բաբելոնական պետութեան մայրաքաղաք չի եղել:

\*) Տես. Դանիէլի մասին դպիր Քամալեանցի «Մարգարէներ» գրքի 131—135.

Պարզ է, որ հեղինակը գաղափար չունի 2. դարու անձնաւորութիւնների և դէպքերի մասին: Հնարովի են այն էդիքտները, որոնք վերագրուած են Դարեհին և Նաբուգոդոնոսորին: Առասպել է վերջինիս 7 տարի իրող կամ վայրենի դառնալու նկարագրութիւնը, քանի որ ընդ. պատմութեան մէջ Նաբուգոդոնոսորը յայտնի է իբրև հանձարեղ կառավարիչ: Հեղինակը կարծում է, որ պարսիկները մինչև Աղեքսանդր Մեծը միայն 4 թագաւորներ են ունեցել, և որ զբանցից վերջինը շատ հարուստ է եղել, յարձակուել է Յունաստանի վրայ, բայց նորա գէմը դուրս է եկել Աղեքսանդրը և նրան գահից զրկել է: Պարզ է, որ հեղինակը շփոթել է Քսերքսէսին Դարեհ հոտոմանոսի հետ: Վերոյիշեալ փաստերի հիման վրայ, այլ և, որ այս գրքում կան արամէական բարբառով կտորներ, կարելի է պնդել, որ հեղինակը իւր գիրքը գրել է Սելևկիան Անտիոքոս Եպիփանէս թագաւորի օրով, մօտաւորապէս 165 թուին: Նա ցանկանում էր իւր հայրենակիցների կրօնական հաւատարմութեան ոգին վառ պահել զուշակելով Աստու թագաւորութեան յանկարծակի գալու մասին: Դանիէլ անունը հեղինակը վերցրել է Եղեկիէլի գրքից, ուր այդպիսի մի բարեպաշտ հրէի մասին յիշատակութիւն է լինում: Այս Դանիէլը և հեղինակը տարբեր անձնաւորութիւններ են:

Ովսէն.—Վերոյիշեալ 4 գլխաւոր մարգարէական գրուածքներին հետևում են 12 ուրիշ փոքր մարգարէներ, որոնցից առաջին Ովսէն է. Իսրայէլի հիւսիսային թագաւորութիւնից, քահանայական ծագումով՝ գործեց Յերոբոամ վերջին և նրան յաջորդող խառնակ տարիներում: Սկզբում մարգարէն հաղորդում է իւր տը-

նային ընտանեկան դժբախտութեան մասին, որի ազդեցութեան տակ է նա մարգարէ դառնում: Ապա հետևում են ճառեր ուղղուած Իսրայէլի թագաւորութեան դէմ, ուր վերջինս ներկայանում է քայքայուած և խառնաշփոթ դրութեան մէջ: Մարգարէն հաւանօրէն ականատես է մինչև 738 եղած դէպքերին: Ովսէն Երեմիայի նման սուրեքտիւ գրող է, նա ներկայացնում է Նազվէն և Իսրայէլը ինչպէս ամուսիններ, որով Աստու սէրը գէպի իւր ժողովուրդը կրթող նշանակութիւն է ստանում: Աստու և ժողովուրդի մէջ մի դաշինք է դրուած, որը ոչ մի կերպ չի կարելի քանդել:

Յովէլ.—Երկրորդ և աւելի աննշան մարգարէն է Յովէլը, որի երեք գլխի բաժանուած գործի բովանդակութիւնը պարզ է. նա նկարագրում է մորեխի պատճառած սարսափը, դատաստան հեթանոսների վրայ և Իսրայէլի փրկութիւնը: Այս գործի ժամանակի մասին կարծիքների մեծ տարաձայնութիւն կայ: Ներկայումս կարծուում է, որ 586 թուից առաջ չի կարող գրուած լինել: աւելի որոշ կարելի է ասել, որ Ե. դարի վերջին առաջ եկած պիտի լինի: Սրան ապացոյց կարող է լինել այն, որ պաս պահելը, արտասուելն ու ողբալը համարուում են բարեպաշտական մեծ գործ: Հեթանոսները Աստու բարկութեան և դատաստանին պիտի արժանանան, մինչ բոլոր հրէաները մեսիական թագաւորութեան անդամ են: Գրուածքի ոճը մաքուր և սահուն է տեղտեղ էլ ուժեղ ներագրութիւններ ունի:

Ամովս.—Ժամանակագրական տեսակէտից Ամովսն է ամենահին մարգարէն, որը մեզ մի կարճ զրական երկ է թողել. և հէնց այդ պատճառով էլ ար-

ժէ առանձին ուշադրութիւն դարձնել նրա վրայ: Նրա հանդէս գալը մի հրաշալի և անբացատրելի կողմ ունի իւր մէջ, երբ մենք դիտում ենք, թէ ինչպէս համարեա գրագէտ մարգարէներ ըլլորը գաղափարները՝ յատկապէս Աստուծոյ արդարութեան գաղափարն այնպիսի պարզութեամբ և սկզբնական թարմութեամբ հանդէս են գալիս: Մի հասարակ գիւղացի, մի հովիւ, որին Աստուած իւր գառների յետևից կանչում, ուղարկում է Բէթէլ՝ Իսրայէլի դէմ խօսելու, նրա դէպի Աստուած և մարդիկ գործած մեղքերը նրա երեսով տալու, սպառնալու նրանց, որ Ասորեստանցիք Աստուծու հրամանով պիտի գան և գերի տանեն իսրայէլացիներին: Բէթէլի սրբավայրում նա գործ է դնում իւր առաքելութիւնը, բայց թագաւորի հրամանով նրան հալածում են և նա վերագառնալով իւր տեղը՝ իւր ճառերը գրի է առնում, որպէսզի ապագայ սերնդին ապացուցանի իւր ասածների ճշմարտութիւնը:

Նա հանդէս է գալիս Իսրայէլի Յերոբոամ Բ. թագաւորի ժամանակ, երբ Իսրայէլը արտաքուստ ծաղկում էր, իսկ ներքուստ փտել էր: Շուայութիւն, ճոխութիւն, Յերոբոամի պալատում՝ զայրացնում էին հոգով առողջ մարդկանց, ինչպիսին էր Ամովսը: Վերջինիս համար խարուսիկ էր այն, որ թագաւորը 760—750 թուերին յաղթութիւններ էր տարել իւր ոխերիմ թըշնամիների վրայ. նա տեսնում էր Ասորեստանցոց թաթը, որը կամաց կամաց տարածուում էր մինչև Միջերկրականի ափերը և հէնց 773—767 նրանք երեք արշաւանքեր էին գործել դէպի փիւնիկեան ափը: Նրանք

գալիս էին կործանելու Իսրայէլի թագաւորութիւնը: \*

Օրադիւս.—Ամենափոքր մարգարէական գրուածքն է Արդիու կամ Օրադիւս մարգարէին վերագրուածը: Այս գրուածքը բաղկացած է մի գլխից, որի մէջ եղովմի համար գուշակուում է սարսափելի դատաստան և պատիժ Յուդայի դէմ գործած չարագործութիւնների համար: Այդ պատճառով եղովմը պիտի կործանուի, իսկ երուսաղէմը փռուաւորուի: Բանասիրական տեսակէտից այս գրուածքը դժուարութիւններ է ներկայացնում. որովհետև շատ կտորներ երեմիայի մէջ էլ կան: Հարցն այն է՝ թէ Օրադիւսն է երեմիայից վերցրել, թէ երեմիւսն Օրագիւսից, թէ երկուսը միատեղ օգտուել են մի երրորդ աղբիւրից: Հին կտակարանի քննադատները ներկայումս կարծում են, որ Ե. դարու առաջին կիսին գրուած է եղել Օրագիւսի մարգարէութիւնը եղովմի մասին, այն ժամանակ, երբ վերջինս ենթարկուեց արաբացիների արշաւանքին: Այս դէպքը այնպիսի ուրախութիւն պատճառեց, որ երուսաղէմում կարծեցին թէ՛ հեթանոսների վրայ վերջին դատաստանի օրը հասել է: Այստեղից վերցրած մի հատուած կցել են երեմիային:

Յովսան.—Հակառակ ըլլոր մարգարէական գրուածքների բնոյթին Յովսանի անունով մնացած 4 գլուխ ունեցող երկը զուտ պատմական ձև և բովանդակութիւն ունի: Յերոբոամ Բ.-ի օրով յիշուած ապրում էր Յովսան անունով մի մարգարէ: Նա իբր թէ պատուէր է ստանում Եհիզիայի՝ Նիսուէ գնալ՝ քարոզելու այնտեղի բնակիչներին ապաշխարելութիւն: Յայտնի

\*) Ովսէի և Ամովսի մասին Տես Իսրայէլի սրբազան պատմութեան 67.—79 էջերում.

են նրա արկածները, նրա ծովը ձգուելը, երեք օր կէտ ձկան փորում ֆնալը և վերջապէս նորա աստիճանութեան յաջողութիւնը: Գրքի հեղինակը ուզում է կարծել տալ, թէ ինքը Նինուէի տիրապետութեան ժամանակակից գործիչ է. բայց այդպիսի բան ենթադրել անհնար է հէնց լեզուական տեսակէտից: Ուրեմն գիրքը չի գրուած այն անձնաւորութեան ձեռքով, որին վերագրուում է և ոչ էլ այդ ժամանակում, այլ շատ ուշ: Հեղինակը օգտուել է հին կտակարանի զանազան նիւթերից՝ կազմելու մի փոքրիկ պատմուածք՝ մի գաղափար պաշտպանելու համար: Պատմուածքի հիմնական գաղափարն այն է՝ թէ հեթանոսներն էլ կարող են փրկուել դարձի գալով և ապաշխարելով: Աստուած միայն Իսրայէլի Աստուած չէ, այլ նաև հեթանոսների: Նա իբրև Արարիչ տիեզերքի գութ ունի զէպի բոլոր արարածները. այս պատճառով Յովնան մարգարէն, որ սկզբում չէր ուզում հեթանոսների մօտ գնալ և նրանց փրկութեան չէր հաւատում, Աստուծոց յանդիմանուում և պատժուում է: Ահա այս մեծ հումանիտական գաղափարի համար Յովնանի մարգարէութիւնը անգնահատելի է. նա մի ազգու բողոք է ընդդէմ հրէական հեղափոխութեան: Հեղինակն այս գործը ամենաշուտ պիտի գլուխ բերած լինի պարսկական տիրապետութեան վերջին: Իբրև գրական տեսակ, այդ գրուածքը մի նովելլա է (միզրաշ), իսկ նորա մէջ Բ. 3—10 եղածը մի սաղմաս է, որն ուրիշի ձեռքով այդ գրուածքի մէջ է ներմուծուած:

Միջիւս.—Աւելի որոշ տեղեկութիւններ ունենք Միջիւս մարգարէի մասին: Երեմիան վկայում է, որ Միջիւս գործել է Յուդայի եղեկիւս թագաւորի օրով՝

այսինքն մօտաւորապէս 700 թուին: Նրա կարծիքով Երուսաղէմի ժողովուրդը ապականուած է: Շարունակութեան մէջ նա այդ միտքը զարգացնում է. Իսրայէլ և Յուդան անշնորհակալ, ապերախտ են զէպի Աստուած. բոլորը մեղանշում են. Սիոնը ողբում է իւր որդիներին անկման վրայ, որոնց վրայ պիտի դատաստան տեսնուի: Դ. Ե. գլուխներում նկարագրուած է, թէ ինչպէս վերջ ի վերջոյ հեթանոսները պիտի խելքի գան և ուխտագնաց լինեն զէպի Երուսաղէմ, այնտեղ Սիոնից սովորեն օրէնքն ու իրաւունքը: Բովանդակութեան այս այլատարր բնաւորութիւնից հետևում է, որ այս գրքուածքը մի հեղինակի և մի ժամանակի գործ չէ: Ենթադրուում է, որ 701-ին Միջիւս գրել է միայն Ա.—Գ. իսկ ֆնացած գլուխները Դ.—Ե և Զ.—է յետոյ են կցել այդ գրուածքին:

Սաում.—Նինուէի անկման մասին է մարգարէացել Նաումը. իւր 2 գլուխ ունեցող գրուածքում: Ուժեղ բանաստեղծական ոճով և դիւթերամբիան արուեստով նկարագրում է այն դատաստանը, որը պիտի գար այդ քաղաքի գլխին, ուրեմն այս գրուածքի ժամանակ Նինուէն կանգուն է և ժողովուրդները նրա լծի տակ հեծում են. բայց սկսուել են նրա դէմ սպառնալից շարժումներ Եգիպտոսի և Բաբելոնի և Մարաց Կիւքսար թագաւորի կողմից:

Ամբակում.—Հաբակուկ կամ Ամբակում մարգարէին վերագրուած 2 գլուխ ունեցող գրուածքը գարմանալի անորոշութիւն է ներկայացնում: Մարդը չի կարողանում հասկանալ թէ՛ այդ մարգարէութեան մէջ ամփոփուած սպառնալիքները որ ժողովուրդի դէմ է ուղղուած: Մի երկու տեղ քաղզէացոց անունն է յի-

շուած. որից պէտք էր եզրակացնել, որ այս գործը առաջ է եկել 605 թուից յետոյ, երբ Քաղղէան կամ Բաբելոն սկսեց սպառնալ Երուսաղէմին: Բայց ուշի ուշով կարգալով այն կտորները, ուր Քաղղէան յիշած է, կտեսնենք, որ ոչ թէ սպառնալիքը նրան է ուղղուած, այլ Նինուէին: Այս գէպքում պէտք է ընդունել, որ Ամբակումը ապրել է 600-ական թուերին. նա եղել է Երեմիայի նկարագրած մարգարէներից մէկը, որոնք մխիթարում էին ժողովուրդին, թէ մի վախենաք ասորեստանցիներից, որովհետեւ Եահվէն չի թողնի, որ նրանք Երուսաղէմը կործանեն, այլ Քաղղէացիների միջոցով Նինուէն կործանել կտայ. հարկաւոր է միայն, որ Յուզան օրէնքները սրբութեամբ կատարի: Կարծիք էլ կայ, որ այս մարգարէութիւնը ծագել է Չ. դարի երկրորդ կիսին: Այս մարգարէութեան Գ. գլուխը մի սաղմոս է ընտիր ճարտասանութեամբ գրուած, որը նոյնպէս նորամուտ բան է և կապ չունի գրուածքի հետ:

**Սոփոնիա.** — Երուսաղէմացի և թագաւորական սերնդից է Սոփոնիա մարգարէն, որը գործել է Ովսէ թագաւորի վերջին տարիներում: Առաջին գլխում նա նկարագրում է Եահվէի օրը, որը Յուզայի և Երուսաղէմի վերաբերմամբ մի սարսափելի աղետի նշանակութիւն պիտի ունենայ: Ուժեղ գոյներով նկարագրուած է մի կտորածի հանդէսը, պատերազմի և կոտորածի փոքր հնչում է. արիւնհեղութիւն, աւերածութիւն, աւար և կողոպուտ սփռուած է ամեն տեղ: Անշուշտ այստեղ ակնարկուած է Ալիւթացիների սարսափ ազդող արշաւանքը, որը հեղեղեց ամբողջ արևմտեան Ասիան: Նաև Հեռոզոտի վկայութեամբ սկիւ-

թական աւազակախմբերը հրդեհ և աւեր սփռուելով՝ դիմեցին դէպի Պաղեստին: Այս երևոյթը զարթեցրել է մարգարէի մէջ այն գաղափարը թէ՛ Աստծու օրը եկել է ոչ միայն Պաղեստինի այլ և միւս ժողովուրդների վրայ, որոնց մասին խօսում է Բ. գլխում: Իսկ նոյն մարգարէութեան Գ. գլուխը, ուր պատմած է թէ՛ հեթանոսները մինչև իսկ եթովպայից պիտի դիմեն Երուսաղէմ Եահվէին փառաբանելու, անշուշտ ուրիշի գործ է:

**Անգէ.** — Յետագայ ժամանակի երկրորդական նըշանակութիւն ունեցող մի մարգարէ է Անգէ, որի մասին պատմուած է Եզրի գրքում, թէ Դարեհի թագաւորութեան երկրորդ տարին՝ 520-ին, նա Չաքարիա մարգարէի հետ սկսեց յորդորել ժողովուրդին Երուսաղէմի տաճարը վերաշինել: Եւ իբրև նրա գրուածի կենդանի տաճարն է և նորա վերաշինութիւնը: Նրա ժամանակ երաշտի և վատ հունձի պատճառով սով է ընկնում, զբա պատճառը մարգարէն համարում է այն, որ ժողովուրդն իւր Տիրոջ համար կանոնաւոր բնակարան չի շինել: Թող նա շինի, այն ժամանակ առատութիւն կլինի երկրի մէջ, Աստծու օրհնութիւնը կիջնի և Դաւիթի ցեղից Չօբաբաբէլը կ'կարողանայ խոստացած մեսիական թագաւորութիւնը կանգնել: Մարգարէի ոճը արձակից հազիւ է տարբերուում, մտքերը պարզ են և երբեմն խոր զգացած: Նրա ճառերի ժամանակ որոշուած է ոչ միայն տարով այլև ամիսներով և օրերով, որով մենք իմանում ենք, որ մարգարէն գործել է 521 թուի սեպտեմբերից մինչև դեկտեմբեր:

**Չաքարիա.** — Եզրի տուած տեղեկութեան համաձայն Անգէի ընկեր և ժամանակակից էր Չաքարիան,

որը մի քահանայ էր: Սրան են պատկանում լուր ա-  
նունով մնացած մարգարէութեան առաջին 8 գլուխնե-  
րը, որոնց մէջ դարձեալ ժամանակը որոշած է 520  
թուի նոյեմբերից մինչև 518 զեկտեմբեր: Այս գրուածքն  
էլ գառնում է Երուսաղէմի տաճարի շինութեան շուր-  
ջը: 8 գլխում պատմած է 8 զիշերային տեսիլների մա-  
սին, որոնք մեկնուում են մի հրեշտակի շնորհիւ: Նա  
յոյս է յայտնում, որ տաճարը պիտի շինուի և հեթա-  
նոսները պատժուեն, մեղքն ու անէծքն Իսրայէլից պիտի  
անհետանան: Աստուծու ձեռքով օծուած Զօրարարէլը  
պիտի լինի իսկական մեսիական թագաւոր, որի իշ-  
խանութեան տակ խաղաղութիւն պիտի վայելեն ժո-  
ղովուրդները: Տաճարի շինութիւնից և մեսիական  
փառահեղ թագաւորութիւնից յետոյ ամեն չարիք  
պիտի վերանայ:

Զաքարիայի մարգարէութեան Թ—ԺԴ գլուխները  
նոյն հեղինակի գործը չեն: Այս գլուխները կազմուած  
են երկու անկախ պատգամներից: Թ—ԺԱ, նկարա-  
գրուում են Ասորեստան և Եգիպտոս իբրև Իսրայէլի  
թագաւորութեան թշնամիներ, ուրեմն ըստ երևոյթին  
և այս հատուածը 721-ից առաջ պիտի գրուած լինի:  
ԺԲ—ԺԴ գլուխներում խօսքը վերաբերում է միայն  
Յուդայի թագաւորութեանը և ուրեմն 722-ից յետոյ է  
հեղինակուած և որովհետև այդ նոյն հատուածում յի-  
շուած է Մէկիդոյի ճակատամարտը, ապա ուրեմն ըստ  
երևոյթին այս հատուածի հեղինակը պիտի ապրած լի-  
նի Երեմիայի ժամանակ 600-ական թուերին: Բայց  
այսպէս ընդունելը շատ սխալ կլինէր. այդ հատուած-  
ների հեղինակը մի գպիր է եղել, որը օգտուել է հին  
մարգարէներից և կազմել է մի երկ, որպէսզի մի քա-

նի յետգերութեան ժամանակի գաղափարներ պաշտ-  
պանի, ինչպէս են, հեթանոսների դարձը, զանազան  
տօների սրբութեամբ կատարելը, սուրբ և անսուրբ կե-  
րակրների պատուէրը և այլն: Այդ հատուածներում  
որոշ կերպով ասուած է, որ հեթանոսների իշխանու-  
թիւնը գտնուում է յոյների ձեռքին, որով անշուշտ  
ակնարկուած է Աղէքսանդրի արշաւանքը: Ամբողջ եր-  
կը տողորուած է այն գաղափարով թէ՛ մեսիական  
թագաւորութիւնը պիտի գայ: Եահվէն մի վճռական ճա-  
կատամարտ պիտի մղի հեթանոսների դէմ, որի ժամանակ  
Յուդան իբրև աղեղ և Իսրայէլն իբրև նետ պիտի դառ-  
նան Եահվէի ձեռքին հեթանոսներին յաղթելու, նրանց  
իբրև կաւ կոխտտելու, նրանց արիւնն իբրև գինի խը-  
մելու համար, որից յետոյ խաղաղութիւն պիտի տի-  
րի: Այս գաղափարները յետգերութեան ժամանակի  
են և եթէ Եգիպտոսն ու Ասորեստանն են յիշուած,  
դրանք այն հին պետութիւնները չեն, այլ առաջիննե-  
րի տակ հասկացուած են Պտղոմեանք, իսկ երկրոր-  
դով Սելևկեաններն են ակնարկուած: Ահա այս ապա-  
ցոյցների հրաման վրայ ստիպուած ենք ընդունել, որ  
Զաքարիայի Թ—ԺԴ գլուխները, ոչ թէ գերութիւնից  
առաջ, այլ շատ յետոյ, մինչև անգամ Զաքարիայի ժա-  
մանակից էլ շատ յետոյ գրուած պիտի լինեն: Մենք  
նրա հեղինակին չենք ճանաչում, այդ պատճառով  
ձևական կերպով կանուանենք երկրորդ Զաքարիա, որը  
ապրած պիտի լինի դիատոխների ժամանակ՝ այսինքն  
մօտաւորապէս 300-ական թուերին:

Մաղաքիա. — 12 փոքր մարգարէներից վերջինն է  
Մաղաքիա: Նրա գրուածքի ձևն ու բովանդակութիւնը  
գարմանաւի է: Մի քանի հարցեր այս գրուածքում տիա-

10գի ձևով վիճաբանութեան են դրուած: Մէկը մի բան հաստատում է, միւսը մերժում է: Բովանդակութիւնը հետեւեալն է: Իսրայէլն անտանելի ճնշումների ազդեցութեան տակ յուսահատուած է և Եհզկէին արժանի յարգանքներ չի մատուցանում: Նոյնիսկ քահանաներն անտարբեր են և զբանով ստահակութեան օրինակ են են տալիս. այդ պատճառով նրանք ծանր պիտի պատժուեն: Հրէաների մի ուրիշ մեծ յանցանք հեթանոսների հետ խառն ամուսնանալն է: Եթէ նրանք իրենց ընթացքը փոխեն և Աստուծոն սրտով ծառայեն, այն ժամանակ նա կարող է նրանց վիճակը լաւացնել: Աստուած կողարկի նախ Եղիային, որպէսզի սա ապաշխարութիւն քարոզի, որից յետոյ Եհզկէն ինքը կգայ անաստուածներին ոչընչացնելու և բարեպաշտներին մխիթարելու: Այս գաղափարները ապացոյց են այդ գլըրուածքի յետագայ ծագման: Մենք տեսնք, որ Եզրն էլ Ն դարում նոյն գաղափարներն էր պաշտպանում. պէտք է ընդունել, որ ուրեմն այս գրուածքը ծագել է նրա ժամանակ 458 թուերին: Գրուածքի հեղինակը մեզ անծանօթ է. Մաղաքիա կամ երբայեցեբէն Մալիախի՝ հրեշտակ, առաքեալ կնշանակի և դժուար թէ հեղինակի անունը եղած լինի, այլ ընդորոշում է, որ այդ գրուածքը մի հրեշտակային աւետիք է: Ընդհանրապէս կարծուում է, որ ինչպէս Չաքարիայի մարգարէութեան Թ—ԺԳ գլուխները, նոյնպէս և այս Մաղաքիային վերագրուած երկը անոնիմ են եղել և որ ժամանակի ընթացքում առաջինը միացրել են Չաքարիայի գործին, իսկ երկրորդի համար բովանդակութիւնից առնելով մի նոր անուն են գտել:

Մաղաքիայով փակուում է մարգարէների շրջանը:

Նրանց վրայ մի ընդհանուր հայեացք ձգելով՝ կտեսնենք, որ եթէ նորա հաւաքուած են և մի ամբողջութիւն կազմած, դրա պատճառն այն է, որ յետագայում գիտակցուեց, թէ մարգարէական ոգին մարել է. իբրև պատմական անցեալի փաստաթղթեր սկսեցին հաւաքել: Այս հաւաքումն ու ամփոփումը տեղի ունեցած պիտի լինի 300—200 թ. Ք. ա: Դասաւորութեան հիմքը ծառայել է ժամանակագրական ծագման ընթացքը: Բայց եթէ այդ ժամանակագրական դասաւորութեան սկզբունքի մէջ սխալուել են, դրա պատճառը եղել է այդ գրքերի բովանդակութիւնը: Միւս կողմից դասաւորութեան սկզբունքի մէջ պակաս դեր չի խաղացել մարգարէական գրուածքների ծաւալը: Մեծերին առաջ են դասել փոքրերից:

## Գ. Գ Լ Ո Ի Խ

### Կրօնական բանաստեղծութիւն

Հին ժողովուրդները աշխարհիկ և կրօնական բանաստեղծութեան մէջ ոչ մի տարբերութիւն չէին դրնում: Ամեն մի երգ նրանց կրօնական էր թուում: Սամսոնը, որն ամբողջ իւր կեանքում փղշտացիների արիւնն էր խմում և նրանց աղջիկների յետևից որսորդութեան էր գնում, կրօնական հերոս է ներկայանում: Բայց ժամանակի ընթացքում աշխարհիկ և կրօնական բանաստեղծութեան տեսակներն սկսեցին զանազանել: Օրինակ՝ զուտ կրօնական բանաստեղծութիւն է ներկայանում սաղմոսների գիրքը. պէտք է ասել, որ սաղմոսներն ընդհանուր առմամբ ուշ ժամանակում են ծագել Իսրայէլի մէջ, բայց որովհետև պատմութեան մէջ յայտնի

քուր կլինեմ, լուսինձ և ձիւնից սպիտակ կլինեմ» և կամ «Լուսանում եմ ձեռներս անմեղութիւնով և քո սեղանի չորս կողմովը պտոյտ եմ գալիս, ո՛վ Տէր»։ Բարեւակաւն ապաշխարութեան և ողբասաց սաղմոսներում շատ կարելի է գտնել նոյնպիսի ցերեմոնիաներ։

Մարգարէների ազդեցութիւնը սաղմոսների յետագայ զարգացման վրայ մեծ էր։ Այն ուժեղ անհատականութիւնը, որ նրանք երևան էին հանում, նրանց բարձր հայեացքը, որով նրանք զոհերը և ծէսերն արհամարհում էին, հանդէս բերին մի զարմանալի կրօնական բանաստեղծութիւն։ Սաղմոսների հին ձևը պահպանուեցաւ, բայց դրանք մի նոր ոգով տոգորուեցան. այլևս ծէսի համար չէին երգուում նոր սաղմոսներ։ Սաղմոսասցը այժմ համոզուած էր, որ աւելի լաւ է երկիւղած սրտից բղխած Աստծուն մի երգ նուիրել, քան եղջիւրաւոր անասուն զոհելը։ Այսպիսով ծիսական երգերից առաջացան անհատական բանաստեղծութիւններ։ Այս տեսակի մէջ ամենից աւելի յայտնի են ողբերը, որոնք աստուածաշատական արարողութիւնների հետ ոչ մի կապ չունեն։ Նրանք ճնշուածների և տանջուածների մրմունջներն են առանձնասենեակում երգուած. բարեպաշտ սրտի երգեր են դրանք, մաքուր կրօնի և ճշմարտութեան յատակ աղբիւրներ։ Այսպիսի դէպքում զգում ես, որ մարդունքին աշխարհը կանգնած է Աստծու առաջ ազատ ամեն ծիսականութիւնից և ազգային կապերից։ ԽՆ և ԿԳ Սաղմոսներում յիշուում են Յուդայի թագաւորներ ուրեմն այդպիսի անհատական երգերից մի քանիսը Երուսաղէմի անկումից առաջ են հեղինակուած։ Այդպիսի կտորներ Երեմիան իւր մարգարէութեան մէջ

շատ ունի։ Ողբերգերը յատկապէս աչքի են ընկնում իրենց զօրեղ անհատականութեամբ. դա խեղճերի բընարեբզութիւնն է,—երգեր արցունքով, հառաչանքով և վշտով լի։ Սրանց շնորհիւ կարելի է ճանաչել կրօնական կեանքից մի օրէնք. կրօնի անդաստանը պլտղաբեր է դառնում արիւն-արցունքով ոռոգուելուց յետոյ։ Այն դէպքում կարող է ճշմարիտ կրօնն առաջ գալ, երբ նա նախապատրաստուում է ներքին կռիւներով. վերջապէս վիշտն ու տանջանքն են մարդուն դէպի Աստուած առաջնորդողը։ Նրա մէջը մարդու ներքին աշխարհը՝ հոգին հանգստութիւն է գտնում և նա ազաղակել կարող է «Սիրտ իմ փառաբանիբ Աստծուն»։ Սաղմոսները կազմում են կրօնական բանաստեղծութեան բարձրագոյն գագաթնակէտը։ Սաղմոսային օրհներգութիւններն անանցանելի գեղեցկութեամբ պատմում են կրօնական զգացմունքի վեհութեան մասին։ Բազմաբովանդակ չեն այն մտքերը, որ դրանց մէջ հանդէս են գալիս, և վեհութիւնն էլ նրանում է, որ դրանց երգիչները ժողովրդի միջից դուրս եկած պարզ մարդիկ են, որոնք իրենց հոգին են դրել այդ երգերում։

Սաղմոսների յետագայ զարգացման ընթացքը դժուար է որոշել։ Յունական-հռովմէական շրջանում, երբ երբայական գրականութիւնը և հրէական ժողովուրդը դէպի անկումն էր դիմում, սաղմոսները այնուամենայնիւ մնացին որոշ բարձրութեան վրայ, ինչ որ ապացոյց է այն բանի, որ Իսրայէլի կրօնը իւր վեհութեամբ բոլորովին չմեռաւ, որ այդ ժողովուրդի մէջ կային անհատներ, որոնց սրտի տակ կրօնական

զգացմունքը իւր պարզութեամբ և վեհութեամբ բորբոք մնաց:

Սաղմոսաց գիրքը պարունակում է 150 տարբեր տեսակի երգեր: Շատ դժուար է իւրաքանչիւրի ծագման ժամանակն ու հեղինակը որոշել: Սաղմոսներն ընդհանրապէս երկու տեսակի վերնագիր են կրում. ա) երբ վերնագիրը յայտնում է, թէ ի՞նչ եղանակով կամ ծիսակատարութեան մէջ ո՞ր տեղը և կամ ի՞նչ գործիքներով պիտի երգուի այսինչ երգը. բ) երբ վերնագիրը մատնանշում է թէ՛ ո՞վ, ի՞նչ պատմական զէպրում կրգել է այն ինչ սաղմոսը: Բայց հաստատ կարելի է ասել, որ այս երկրորդ տեսակի վերնագիրների պատմական ցուցումները ոչ մի պատմական արժէք չունեն, որովհետեւ այդ վերնագիրները յետագայ արտագրողների գործ են. այս պայմաններում մնում է մեզ ներքին հիմունքներով քննել սաղմոսների հնութիւնը կամ ծագումը, ձևէ. սաղմոսը, որը գրուած է բաբելոնական գերութեան ժամանակ և ուրեմն 500 թուականից առաջ է, վկայում է, որ արդէն գոյութիւն են ունեցել Սիոնի և Աստծուն նուիրած երգեր: Բայց չի կարելի չխոստովանել, որ սաղմոսներն ընդհանրապէս յետգերութեան ժամանակի գործ են և որ դրանք մարդտրեական գործունէութեան շարունակութիւնն են կազմում: Զարմանալի է միայն, որ սաղմոսների մեծ մասը Դաւթին է վերագրուած: Դաւթի ընդհանուր անունը արուեստին անձանօթ չէր. այդ մասին յիշուած է, բայց նրա անունով մնացած երգը կրօնական ոչինչ չունի իւր մէջ: Միայն մնացորդաց գիրքը, որ շատ յետոյ է ծագել, յիշում է, որ Դաւթի եղել է սաղմոսասաց: Յետգերութեան ժամանա-

կի Իսրայէլի ժողովուրդը ոչ թէ մի պետութիւն էր կազմում, այլ մի ազգային եկեղեցի, որի հիմնաքարն էր հաւատը զէպի Մեսիան, որը Դաւթի թագաւորութիւնը պիտի վերանորոգէր. ահա այս պատճառով այս եկեղեցում անհրաժեշտարար այն հաւատը պիտի առաջ գար, որ Դաւթին է մեծ մասամբ հեղինակել այդ երգերը, քանի որ նրանց մէջ նրա ապագայ թագաւորութիւնն է փառաբանուում:

Սաղմոսների գիրքն ուրեմն մի հաւաքածոյ է զանազան ժամանակներից և հեղինակներից ծագած երգերի: Այդ երգերը բաժանուած են խմբերի: ԽԲ—ԽԹ Կորեի որդոց Սաղմոսներ ՀԳ—ՁԳ Ասափի. ՃԲ—ՃԼ Դաստիճանների ձժԱ—ձժԳ և ձձԶ—ձժՍ ալելուայի սաղմոսներ և այլն: Այս խմբակցութիւններից դուրս այդ 150 սաղմոսները 5 որոշ մասերի է բաժանած ա) Ա.—ԽԱ բ) ԽԲ—ՀԲ գ) ՀԳ—ՁԹ դ) Ղ.—ՁՁ ե) ՃԲ—ձժ իւրաքանչիւր մասի վերջը նշանակուած է մի փառաբանական Փորձալայով, իսկ վերջին 150-րորդ սաղմոսը ամբողջովին փառատրութիւն է: Այս հինգի բաժանուածը անշուշտ կապ ունի հնգամատեանի կազմութեան հետ, որն իւր վերջնական ձևակերպութիւնն ստացաւ 400 թուերին, ուրեմն և այդ բաժանումն էլ այդ թուերից առաջ չի լինի: Բայց ուրիշ հանգամանքներ ստիպում են մեզ այդ թուից շատ ցած իջնել, որովհետեւ բազմաթիւ սաղմոսներ կան, որոնք մակարեաական պատերազմների ժամանակ ծագած լինել կարող են. (օր. ԽԴ. ՀԳ. ՀԹ. ՁԳ.) ուրեմն և սաղմոսներ հեղինակուում էին դեռ 140-ական թուականներին:

Առանձին խումբ են կազմում ողբի երգերը. դրութիւնն այդ երգերում պարզ է և միապաղաղ: Ոլբ է

ասուում Երուսաղէմի աւերակները վրայ. Յուդայի գերութիւնից յետոյ նա ամայի է. Երուսաղէմը ողբացող աղախնի է նման, որին բոլորը ծաղրում և այպանում են: Եհզակէն է պատժել Սիօնին իւր մեղքերի անհնազանդութեան և անհաւատարմութեան համար. ոչ մի փրկութիւն չկայ, քանի որ Աստու բարկութիւնն է ծանրացել այս ժողովրդի վրայ:

Բովանդակութիւնից հետեւում է) որ այս երգերը 586 թուից յետոյ են գրուած: Այս ողբերի հեղինակը հրէական և քրիստոնէական աւանդութեան համաձայն համարուում է Երեմիա մարգարէն:

Ողբի երգերի չափը երկար է. տները գլուխները այբուբենական կարգով են գրուած և սկսուում են վայ խօսքով: Առանձին հնարաւորութիւն չունենք որոշելու, թէ իսկապէս Երեմիան մասն ունի այս երգերի կազմութեան մէջ, թէ ոչ: Այն հանգամանքը, որ այդ երգերը Երեմիայի մարգարէութեան հետ չեն միացած ոչ յունական և ոչ եբրական բնագրում, ապացոյց կարող է համարուել այն բանի, որ սկզբում Երեմիան չի համարուած այդ երգերի հեղինակը:

Երգ-երգոց.— Էին կտակարանի գրական արդիւնքներից տարօրինակ կերպով գատուում է այս երկը, որի միակ թեման է մարդու սէրը դէպի կինը և կնոջը դէպի մարդը: Այս նիւթը չնայած որ ժամանակակից մարդու ամօթխածութեան զգացմունքը վերաւորող մերկութեամբ է հանդէս գալիս, այնուամենայնիւ մինչև մեր օրերը ճիշտ գաղափար չեն կազմել այդ երկի մասին: Բանաստեղծը միամիտ պարզութեամբ երգում այն մասին, ինչով բախտաւոր է: Երգիչն ապրում է ու շնչում բնութեան մէջ, որն իւր բաղդա-

ւորութեան հայելին և վկան է: Բանաստեղծի սրտի հետ ամբողջ բնութիւնը տօնական տրամադրութեամբ է հանդէս գալիս:

Երգ երգոց վերնագիրն ուզում է ասել, թէ այս բանաստեղծութիւնը Սողոմոնի երգերից լաւագոյնն է: Վարդերով և մրտենիներով պսակուած փիլիսոփայ թագաւոր Սողոմոնը հանդէս է գալիս իբրև այս երկի հեղինակ: Թէ Սողոմոնը եղել է մի արգասաւոր բանաստեղծ, այդ մասին վկայում է Գ. թագ. Ե. 12, ուր յիշուած է Սողոմոնի 1005 երգեր հեղինակելու մասին: Այս բանաստեղծութեան մէջ մի քանի տեղ Սողոմոն անունն է յիշուած. մի քանի տեղ թագուհիներ են հանդէս գալիս, փարաւոնի ձիերն ու կառքերը, Երուսաղէմն ու Երուսաղէմի աղջիկները: Այնուամենայնիւ այս երկը Սողոմոնին չի կարող վերագրուել: Այս երգերը բաղկացած ընդամեն 116 տողից չեն կարող Սողոմոնի 1005 երգերի տեղը բռնել: Լեզուն ինք իրեն մատնում է, որովհետև շատ արամէական տարրեր ունի իւր մէջ: Թերսա քաղաքն էլ, որ 900 թուից առաջ հիւսիսային թագաւորութեան մայրաքաղաքն էր և որը այս երգի մէջ յիշուում է, չի կարող այս գործի հնութեան ապացոյց լինել, որովհետև այդ քաղաքի անուան հետ միայն բառախաղութիւն է արուած, որը նշանակում է գեղեցկաշէն:

Աւելի հետաքրքիր է այն հարցը, թէ այս գործը գեղարուեստական որ տեսակին է պատկանում: Շատերը կարծում են, թէ դա թատերգութիւն է, որի մէջ կան մօնօլօգներ, տիալօգներ, խմբի երգեր, տեսարանի փոփոխութիւններ: Գործող անձերից երկուսի

անունն է յիշուած՝ Սողոմոնն ու նրա կինը Սուլայմիթ։ Այսպէս ընդունողները դժուարանում են որոշել թէ այս գործը Սողոմոնին փառաւորելու թէ ծաղրելու համար է հեղինակուած։ Բայց պէտք է նկատել որ սեմական ժողովուրդների գրականութեան մէջ թատերգութեան հետքն անգամ չկայ, եթէ չյիշենք Ալեքսանդրեան շքանի հրէայ Եղեկիէլին, որը փորձեց Իսրայէլի եգիպտոսից դուրս գալը գրամայի վերածել։ Սրանից զատ դժուար է երևակայել մի թատերգութիւն 116 երկտողից և 12 տեսարանից։ Շատերը կարծեցին, որ այս գործը մի օպերայի կամ կոնցերտի նման մի բան է։ Իսկ այս բոլոր տարածայնութիւնների գլխաւոր պատճառն այն է, որ այդ 116 երկտողերը մի ամբողջութիւն չեն կազմում, այլ նրանք կարծես մարգարիտներ լինեն մի թելի վրայ շարուած։

Այս գրուածքի ճիշտ ըմբռնողութիւնն ու գնահատութիւնը կախուած էր արևմտեան Ասիայի ժողովուրդների բարքերի մօտիկ ուսումնասիրութիւնից։ Ասորիքի բնակչութիւնը հարսանիքի եօթն օրերը համարում է թագաւորական շաբաթ, որովհետև այստեղ ինչպէս և հայերի մէջ՝ նորապսակները ներկայանում են իբրև թագաւոր ու թագուհի, որոնք բարձր աթոռի (տախտ) վրայ են նստում և հրաւիրուածներին իբրև թագաւորական զոյգ գովաբանուում են։ Այս առթիւ հարսանեկան արարողութիւնների ժամանակ երգուում են փոխ առ փոխ հարսանեկան երգեր կամ տեղի են ունենում պարեր։ Այստեղ թագաւորը նորապսակ ամուսինն է, որը Սողոմոն է անուանուում, իբրև ամենահարուստ և բախտաւոր թագակիր։ Սուլայմիթն էլ Իսրայէլի մէջ ընդհանրացած մի գեղեցիկահու անուն է

եղել, որով անուանուել է ամեն մի նորահարս։ Այս երկի Գ. գլ. 11 արդէն իսկ հաստատում է մեր կարծիքը, երբ ասուած է «Ելէք և հայեցարուք, դատերք Սիօնի, յարքայ Սողոմոն ի պսակն, որով պսակեաց զնա մայր իւր յաւուր փեսայութեան իւրոյ»։ Հրէական հարսանեկան սովորութիւններից մէկն էր փեսայի և հարսի գլխին ոսկուց կամ արծաթից շինած պսակ դնել, որոնք շինուում էին ճաշակով և զարդարուում էին գեղեցիկ քարերով։ Ուրեմն Երգ երգոց գիրքը ժողովուրդական հարսանեկան երգերի մի հաւաքածոյ է. երևի հարսանիքի ժամանակ ուրիշ երգեր էլ են երգել, բայց սրանք իբրև ամենալաւեր պահուած են։

Այս երկը ծագել է հաւանօրէն Երուսաղէմում երրորդ կամ երկրորդ դարում։ Եւ որովհետև Սողոմոնի անունը շարունակ յիշուում է, այդ պատճառով նրան է վերագրուել և կանոնական դարձել. իսկ այն կտորները, որոնք գայթակղեցուցիչ են, այլաբանօրէն մեկնուել են։

## Գ Գ Լ Ո Ւ Խ

Յըրայական վարդապետական գրականութիւնը

Յորի գիրք.—Վարդապետական գրականութիւնը ծագում է մարգարէականի կողքին և վերջն էլ դրա տեղը բռնում։ Բարեխոնական գերութիւնից յետոյ մարգարէները համարեան լռեցին. հանդէս եկաւ օրէնքի ուսումնասիրութիւնը և կրօնական գիտնականութիւնը։ Կրօնական պահանջը միայն քնարական երգերով չբաւականացաւ, այլ սկսեց բանականութեան դուռը բաց

խել: Աստուածաբանութեան մէջ իմաստութիւնը բռնեց կենդրոնական տեղը, որովհետեւ իմաստութիւնը Աստուծու առաջին պարգևը համարուեց: Եբրայական իմաստութիւնը յունական փիլիսոփայութեան զուգահեռական երևոյթ կարելի է համարել, բայց դրանց մէջ մնաց մի հիմնական տարբերութիւն: Յունական փիլիսոփայութեան մէջ ճանանչողութիւնն ինքնանպատակ էր, իսկ եբրայական իմաստութիւնը միջոց էր կրօնաբարոյական պրօբլէմները ըմբռնելու և լուծելու: Այդ պրօբլէմները տեսական, մետաֆիզիքական չէին, ինչպէս Յունաստանում, այլ գործնական-կրօնական: Այստեղ աստուածավախութիւնն է համարուում իմաստութեան սկիզբը, որը Աստուածանից է բղխում և դէպի Աստուած էլ պիտի առաջնորդի մարդկանց: Աստուած իմաստութեամբ է ստեղծել աշխարհը և աշխարհը նոյն իմաստութեամբ դէպի Աստուած պիտի դառնայ: Այս տեսակի գրականութեան թագն ու պսակն է Յորի գիրքը: Այդ գրքի մէջ շօշափուած է մի մեծ պրօբլէմ: Մարգարէների կրօնական ոգևորութեան դէմ իբրև ունակցիա իմաստունների շրջանում կրօնական հարցեր և կասկածներ են ծագել: Յորի գրքում բանաստեղծը իւր շրջանի կրօնական կենդրոնական այն պրօբլէմն է շօշափում, որը սաղմոսների, օրէնքի և աւանդութիւնների մէջ կրկին ու կրկին հանդէս է գալիս. այդ այն համոզումն է թէ՛ Աստուած բարեպաշտութիւնը վարձատրում և չարագործութիւնը պատժում է: Այդ հաւատը խոր արմատացել էր բարեպաշտների սրտում, աւելի հաստատուն քան երկինքն ու երկիրը, բայց բանաստեղծը ստիպուած է այս հաւատը կասկածի ենթարկել: Մի բարեպաշտ և ազդեցիկ մարդ յանկարծ ծանր փորձան-

քի է ենթարկուում: Նրա բարեպաշտ բարեկամները, որոնք սովոր էին, անհատի բախտով կամ անբախտութեամբ որոշել մէկի արդար կամ մեղաւոր լինելը, մեղաւոր են յայտարարում նրան, որի ծածկուած մեղքերն Աստուած պատիժներով ի յայտ է բերում:

Հատուցման վտրդապետութեան այս անկարեկից գործադրութիւնը նրա վրայ բաց է անում նրա աչքերը և իւր կրած մեծ վշտից բանաստեղծ է դառնում: Բանաստեղծը և Յորը տարբեր անձնաւորութիւններ են. Յորի աւանդավէպը եղել է ժողովրդի մէջ և բանաստեղծը օգտուում է ժողովրդական այդ նիւթից: Աստուած սատանայի հետ զբաղ է գալիս և ուղղում է վերջինիս ապացուցանել, որ բարեպաշտ Յորն իրեն՝ Աստուծոն անշահասէր միտումներով է նուիրուել. և որպէսզի ցոյց տայ թէ՛ ինչպէս զօրեղ է նրա մէջ Աստուծու երկիւղը, իրաւունք է տալիս նրան՝ դնալ և տանջել Յորին և հեռացնել իրանից: Սատանան գալիս է և հարուած հարուածի յետևից հասցնում է Յորին: Վերջինս կորցնում է իւր ամբողջ հարստութիւնը, իւր ընտանիքը, ինքն էլ ծանր հիւանդութիւններով վարակուած՝ նստում է մոխրի վրայ և ողբում իւր ծնուած օրը. այդ բոլոր դժբախտութեան մէջ նա համբերում է և չի կորցնում իւր աստուածավախութեան զգացմունքը. բայց այնուամենայնիւ նրա տանջուող հոգու վրայ ծանրանում է այն հարցը, թէ ինչո՞ւ Աստուած այդպէս պիտի վարուէր. այդպիսի Աստուած արդար կարո՞ղ է լինել: Նրա բարեկամներն անխիղճ կերպով այսպէս են տրամաբանում, ով մեղաւոր է, նա պատժուում, ուրեմն պատժուող Յորը մեղաւոր է և պարտաւոր է խոնարհամիտ հեզութեամբ հնազանդուել Աստուծու հարուած-

ներին: Այսպէս է ամբոխի գովմատիքական տրամաբանութիւնը: Բայց Յորի սուբեքտիւ համոզումն այն է, որ ինքն արդար է և հետեաբար իւր արդարութեան համաձայն էլ պիտի վճռուի նրա բախտը, իսկ քանի որ այդ տեղի չի ունենում, նա յուսահատուում է Աստծու և տիեզերքի բարոյական կարգաւորութիւնից, սիրտը կտրատող հառաչանքներով ողբում է նա մարդկանց ճակատագիրը: Նա դատ է սկսում Աստծու դէմ սարսափելի զայրոյթով և հէնց իրան՝ Աստծուն վկայ է կանչում: Աստուած յայտնուում է և վեհափառօրէն նրկարագրում է իր՝ տիեզերքի Արարչի և Նախախնամողի գերբնական փառահեղութիւնը և պահանջում է Յորից իւր բողոքը յայտնել. բայց Աստծու ամենակարողութեան առաջ բողոքողը լուում է և յետ է առնում իւր յանդուգն խօսքերը. իսկ Աստուած հաստատում է Յորին իւր նախկին դրութեան մէջ: Յորի բարեկամներն ստիպուած են խոստովանել, որ ով Աստծուն պաշտպանելիս ստում է, մեղք է գործում: Դժբախտաբար այն պրօբլէմը, թէ ինչո՞ւ արդարը տանջուում է, այս գրքում խոր զգացուած բայց չէ լուծուած. մի ճշմարտութիւն է պարզուում, որ տանջուողին չպիտի դատապարտել կամ հայածել. նրան մնում է դառնալ մարդկանց սրտերում թաքնուած և բնութեան մէջ գործող Աստծուն, որը տանջանքով մարդկանց կրթում է:

Ոճի տեսակէտից այս գիրքը շատ ինքնուրոյն է: Նրա բովանդակած ճառերը մրցութեան մէջ մտած իմաստունների վէճեր են, որոնք զարդարուած են քնարական մտիւններով, վշտալի ողբերգերով և հրաշալի օրհներգութիւններով: Բանաստեղծը կարողացել

է ցնցող արտայայտութիւններ գտնել հոգեկան կռուի համար: Փիլիսոփայական-կրօնական գրականութեան այս տեսակը կարելի է գտնել նաև եգիպտական գրականութեան մէջ: Յետագայում Յորի գիրքը ենթարկուած է յաւելումների Բ—Լէ. և յապաւումների:

Գրքի ծագման ժամանակն ու տեղը չի կարելի ճշտութեամբ որոշել: Երբայական աւանդութիւնը Մովսիսին է վերագրում, բայց գրքի բովանդակութիւնից և ձևից դատելով՝ պէտք է յետգերութեան ժամանակի վերագրել: Ինչպէս ասացինք, բանաստեղծն ու Յորը նոյն անձնաւորութիւններ չեն, այլ բանաստեղծըն արդէն կամ գրաւոր կամ բերանացի ունեցել է մի ժողովրդական աւանդութիւն բարեպաշտ Յորի մասին և նա օգտուել է այդ աւանդութիւնից այնպէս՝ ինչպէս Գէօթէն միջնադարեան աւանդավէպից Դր. Փաուստի մասին: Մի այդպիսի բարեպաշտ Յորի յիշատակութիւն մենք գտնում ենք Եգիպտէլի Ժ. Գլխում. յամենայն դէպս գալիս ենք այն եզրակացութեան, որ չնայած որ Յորի աւանդավէպը կարող է շատ հին լինել, բայց այս գիրքն այս ձևով խմբագրուած Եգիպտէլից էլ շատ յետոյ ծագած պէտք է համարել: Վէպի գործողութեան վայրը Եգովմն է համարուում:

Վարդապետական գրուածքի մի ուրիշ օրինակն է «Առակաց գիրքը», որը իմաստուն խօսքերի մի հաւաքածու է: Եգիպտացի, բարեխացի, եգովմացի իմաստունները վաղ ժամանակներից անուն էին հանել իրենց առակախօսութեամբ: Այդ ժողովուրդներն էլ ունին Առակաց գրքի նման գրականութիւն. Սկզբնապէս հաւատալիքի մէջ գոյութիւն ունէր իմաստութեան աստուածուհին, որը Աստծու ամենասիրելի աղջիկն էր

և պաշտպան իմաստուններին: Սպիտակափառ մօրուքով մարդիկ էին, որոնք հրապարակներում կամ դարպասների առաջ իմաստութիւնն էին մշակում, զանազան առակներ կամ իմաստուն խօսքեր մանկութիւնից սովորած՝ փոխանակում էին. ջահելները լսում էին և իմաստնանում: Այդ իմաստուն խօսքերը ժողովրդական առակներ չէին ժամանակակից մտքով, այլ միայն որոշ շրջանի արհեստական ստեղծագործութիւն: Հրէայ իմաստունները բարի խրատ էին տալիս կեանքի ամեն կողմերին վերաբերեալ. նրանք իմանում էին թէ ի՞նչ պիտի անել դաշտում, տանը, ի՞նչպէս վերաբերուել կնոջ, երեխային, ծառային կամ աղախնուն, բարեկամին կամ թշնամուն և այլ այսպիսի բազմաթիւ դիտողութիւններ աշխարհիկ կեանքից. յետագայում հաւաքուեցին դրանց հետ կրօնաբարոյական մտքեր, որոնց ուղղութիւն տուողն է «Սկիզբն իմաստութեան երկիրը Տեառն»: Այս վերջին տեսակի մտքերի ելակէտն է հատուցման հաւատը, որն ամեն զարգացած կրօնների մէջ հանդէս է գալիս: Բացարձակօրէն այն հաւատն է իշխում, թէ Աստուած բարեպաշտներին ամեն տեսակ բարիքներով վարձատրում է, բայց չարերին անխուսափելի կերպով պատժում է: Առակախօսը ոչթէ ամբողջ ժողովրդի ճակատագրով է հետաքրքրուում, այլ միայն անհատի: Այս առակների սառն կենսագիտութեանը բոլորովին օտար է մարդաբանների բոցավառուող ոգևորութիւնը:

Չնով այս իմաստուն խօսքերը սկզբնապէս շատ կարճ, կրկնակ տողեր են եղել. նրանք պարունակում են կամ ընդհանուր դիտողութիւններ կեանքի մասին և կամ ուղղում են մի պատանու սովրեցնել, զգուշացնել.

Այսպիսի մանր ասուածցուածքներից կազմուել են ընդարձակ հատուածներ, որովհետև դրանք միևնոյն խնդրի շուրջն են դառնում: Ահա այսպիսի հատուածներից կազմուել է Առակաց գիրքը:

Վերև ասածներից պարզ հետևում է, որ այս իմաստուն խօսքերը չեն կարող բոլորն էլ Սողոմոնին վերագրուել, ինչպէս հրէական աւանդութիւնն է ընդունում: Գ. Թագ. Ե<sub>12</sub> ասուած է, որ Սողոմոն 3000 առակներ է խօսել, այն ինչ մեր հաւաքածոյի մէջ 935 առակներ կան, բացի թուերի այս տարածախնութիւնից՝ բովանդակութիւնն էլ այդ աւանդութեան դէմն է խօսում: Այստեղ թագաւորը հանդէս է գալիս իբրև ժողովրդին հարկերով ճնշող: Ամեն տեղ գովուում է ժողովալ և միակին ամուսնութիւն, ինչ որ Սողոմոնի բերանում ծիծաղելի կլինէր: Առհասարակ ոչ մի ծրագիր չկայ այս երկի մէջ, և ինչպէս ասացինք՝ մի մարդու գործ լինել չի կարող: Սրա ծագումը հաստատութեամբ կարելի է յետգերութեան պարսկական ժամանակին վերագրել: Մի ուրիշ նոյնպէս անհաւանական աւանդութեան նայելով՝ ԻՅ—ԻԹ գլուխները Յուդայի Եզեկիա թագաւորն է հաւաքել տուել: Ընդհանուր առմամբ այս գրքում հանդէս է գալիս քաղաքի կեանք, հաւանօրէն Երուսաղէմին:

Իրիդաբտիկական գրականութեան մի ուրիշ նբմուշ է «Ժողովող»-ը, որը սակայն իւր ոգևով տարբերուում է հին կտակարանի բոլոր գրքերից: «Ունայնութիւն ունայնութեանց, ամենայն ինչ ոչինչ է: Չի՛նչ աւելի է մարդոյ յամենայն վաստակս իւր, զոր տաժանի ընդ արեգակամբ. աղգ երթայ և աղգ գայ և երկիրս յաւիտեան կայ... և ոչ գոյ բարի վասն մարդոյ, բայց զոր ուտէն և ըմբէն»: Այս յոռետես մտքերը անձանօթ




են ս. Գրքի միւս գրուածքներին: Թւում է թէ հեղինակը Սողոմոնն է, որն ուղում է հանդէս դալ իբրև Դաւթի որդի՝ հարստութեամբ և իմաստութեամբ՝ ճշխացած, կեանքի մէջ ամեն բարիք վայելած, յոռետես զիտակցութեամբ լեցուած: Բայց լեզուն, որը շատ արամէական տարրեր ունի իւր մէջ, չի թոյլ տալին ընդունելու, որ դրա հեղինակը Սողոմոնն է: Բովանդակութիւնից երևում է, որ հեղինակը եղել է մատերիալիստ, էպիկուրէիստ, որի համար ամեն մի իդեալ կասկածելի է: Սովորական կեանքի անարդարութիւններն ու հասարակութիւնները յուսահատեցնող հանելուկներ են: Արդարի և ճնշուածի արատուքն ի զուր է հոսում, անպատկառ չարագործը ամեն տեղ իշխում է: Ճիշտ է. Աստուած ամեն բան լաւ է ստեղծել, բայց մարդիկ ամեն ինչ խառնում, փչացնում են: Աստծո՛ւ ճանապարհներն անքննելի են, նա դատաստան չի անում: Տիեզերքի ընթացքը մի յաւիտենական միօրինակութիւն է: Չարիքները մարդը պէտք է համարի ճակատագրական և ընդունի, որովհետև միւսոյնն է: միայն աւելի լաւ է աստուածավախ և բարեպաշտ լինել: Այս գրուածքից երևան է դալին հին կտակարանի ժողովրդի բարեպաշտութեան ոյժը, որովհետև չնայած որ հեղինակը կրում է իւր կրօնի տակը տիեզերական վիշտը, որը յատուկ է ժամանակակից յոռետեսին, այնուամենայնիւ այնչափ դժուար է նրա մէջ բարեպաշտական զգացմունքը, որ տիեզերքի աններդաշնակութիւնն ու աննպատակութիւնը տեսնելուց յետոյ, մեր ժամանակի յոռետեսների այն վերջին եզրակացութիւնը չի հանում, թէ «Աստուած չկայ» թէ «ամբողջ տիեզերքը կոյր պատահականութեան ձեռքին մի խաղազնդակ»-է:

Ճիշտ է, նա չի կարողանում հիմնաւոր համարել անճշակութեայ Աստծու և տիեզերքի բարոյական կարգաւորութեան հաւատը, բայց աւելի լաւ է համարում երեխայական միամտութեամբ այդ բանն ընդունել՝ քան չընդունել:

Գրքի բովանդակութիւնից երևում է, որ դա եղել է մի ժամանակ, երբ բացարձակ անարխիա է իշխել: Անպէտք ինքնակոչներ իրաւունքը և ոյժը իրենց ձեռքին ունեն, այնպէս որ քաղաքական լաւագոյն իմաստութիւնն է համարուում բութ անտարբերութեամբ տանել բռնապետութեան արհաւիրքները: Գերութիւնից յետոյ հրէութիւնը երկու այդպիսի շքշաններ ունեցաւ. ա) պարսկական տիրապետութեան վերջին շրջանը, երբ պարսից հսկայ պետութիւնը բաժան բաժան էր լինում. բ) պողոմեան և սելէկեան վերջին ժամանակները, երբ յոյն տարր հանդէս բերեց իւր տգեղ կողմերը՝ զելութիւնն ու անբարոյականութիւնը: Պարսկական շրջանն ընդունել չի կարելի, որովհետև այս երկի վրայ երևում է հելլէնական փիլիսոփայութեան ազդեցութիւնը, որը նկատելի է Պաղեստինի վրայ Ազէքսանդր մեծի արշաւանքից յետոյ: Հաւանօրէն այս երկը ծագել է 204 թուին, երբ գահ էր բարձրացել հինգ տարեկան Պողոմէոս Բ. Եպիփանէսը, որի ժամանակը Պաղեստինն անիշխանութեան էր մատնուած:

Այս գրուածքի միութիւնը շատ խախտու է. ճիշտ է. ամբողջ երկը մի ընդհանուր ոգով և զգացմունքով տողորուած է, բայց դա մի ամփոփ փիլիսոփայական սխտեմ կամ մի ամբողջացած աշխարհայեացք չի պարունակում: Հեղինակը կամ չի ունեցել կամ չի

կարողացել իւր գործին այդպիսի բնաւորութիւն տալ:  
 Թերեւ հեղինակն ինքը մի հակասութիւններով լի  
 բնաւորութիւն էր, որի մէջ երկու հոգի միաժամանակ  
 էին ապրում. գլխով յոյն էր, սրտով հրէայ կամ ուրիշ  
 կերպ բնորոշելով կարող ենք ասել. հեղինակի տեսա-  
 կան բանականութիւնը չէր կարող Աստու և մետա-  
 ֆիզիքական աշխարհի գոյութիւնն ապացուցանել, բայց  
 գործնական բանականութիւնը հաստատուն ընդունում  
 էր այդ հնարաւորութիւնները:



50 924

## ԼՈՅՍ ՏԵՍԱՆ

- 1) Ի՞նչ է կրօնը և ի՞նչ է բարոյականութիւնը . . . . . Գ. 15 կ.
- 2) Սրբազան պատմութիւն իսրայէլի . . . . . » 50 »
- 3) Ի՞նչ է Աստուածաշունչը Դ-ր. Մ. Սոստիկեան . . . . . » 20 »

---

### ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ Է ԵՒ ՇՈՒՏՈՎ ԼՈՅՍ ԿՏԵՍՆԵՆ

- 1) Բարոյագիտութիւն. Դ-ր. Մ. Սոստիկեան . . . . .
- 2) Բնագիտական և կրօնական աշխարհայեացք . . . . .  
Գ-ր. Ի. Պետրովն.

Վաճառու՝ Է Նեղինակի մօտ David der  
Philosophe

D-r. M. Khostikian



ԳԻՆՆ Է 20 ԿՈՊԵԿ.

«Ազգային գրադարան»



NL0158460

